ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ

Եղանակ

11-12

(230-231) Նոյեմբեր-դեկտեմբեր, 2025

Համարի տպագրությանն աջակցել է Համազգային հայ կրթական և մշակութային միության (հիմնադրամ) Գյումրու գրասենյակը

ԳՈՅՈՒԹՅԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԻՆ ՄԵՐՁ

ՎԱՀԱՆ ԹԱՄԱՐՅԱՆ

Լուսանկարը՝ Հայկ Ադամյանի

Ի նընջմանէդ արքայական,
Զարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր...
ՊԱՂՏԱՍՍԱՐ ԴՊԻՐ

ՄԱՐԴԸ հայտնվել էր Սպիտակից...

Ասում եմ՝ հայտնվել էր, որովհետև նա, իրոք, անհայտությունից էր եկել: Երկար, զգզզված մազեր, այսպես ջղային, այսպես՝ ծնկներ թուլացնող ձայն ու շարժմունք, և աչքեր, որ նկարագրության ենթակա չեն: Սպիտակ քաղաքի դպրոցներից մեկի տնօրենն էր այդ մարդը: Պատմում էր՝ ինքն իր ձայնից ու մեր ներկայությունից վախենալով, ցաքուցրիվ: Նրա պատմությունը, որքան էլ ճշմարիտ, բայց մեզ անհավանական էր թվում: Մենք՝ Կիլիկիա թաղամասի մի խումբ տնվորներ, անհավատ չէինք, բայց դժվար էր հավատալ, իբր, Սպիտակը հիմնովին ավերվել է, թեև դրսում չարագույժ, անկյունից շպրտված դանակի պես՝ անսպասելի խոցող, կաղկանձն էր շտապօգնության մեքենաների…

Անընդհատ միացրած են ռադիոն, հեռուստացույցը: Գունավոր էկրանին ժամանակ առ ժամանակ հայտնվում է մոլորված որևէ հաղորդավար և ասում, որ սպասվում է շատ կարևոր հաղորդագրություն: Երեկո է: Ժամերը տանջելով անցնում են, իսկ հաղորդագրությունը չկա ու չկա: Ոնց որ մարդու ողջ-ողջ թաղեն: Ինչի՞ են սպասում: Դուրսն ավելի ճնշող է: Երկար, զգույշ պտտվում եմ ավտոկայանի շուրջը: Ավտոբուս է գալիս: Լենինականից է: Վախեցած մոտենում և անմիջապես էլ ետ եմ քաշվում. հողմնապակին արնոտ է: Ավելի ետ գնալով, լարված սպասում եմ անհայտության ճշգրտվելուն, երևի: Ուղևորներին եմ նայում, բայց հստակ չի երևում, թե ովքեր կամ ինչ վիճակում են իջնողները: Շատերն են ինձ պես հեռու կանգնած, վախենում են մոտենալ ու մի բան հարցնել: Հեռու կանգնած ինչ-որ կանայք ջղային հեկեկում են: «Փափախ» տաքսիների կանգառում սոսկալի իրարանցում է: Լենինական կամ Սպիտակ տանելու համար վարորդներն իսկապես «հոր գին» են պահանջում: Իսկ ինձ, չգիտեմ ինչու, թվում էր, թե ձրի են տանելու...

Տագնապալի, անքուն գիշեր: Ծանր, անորոշ հեռանկարով սկսված լուսաբաց: Ու երկար, խուճապահար ճանապարհորդություն դեպի Լենինական: Բուն խուճապն ահագնացավ Աշտարակի մատույցներում. դիմացից եկող մեքենաների բոլոր լույսերն անխտիր վառվում են: Ոչ ոք ազդանշան չի տալիս կամ հատուկենտ են՝ ճանապարհ ստանալու աղերսով: Արյան սառած շիթեր ապակիներին: Ծռմռված, ճմլված, ջարդված մեքենաներ: Կքված, թեքված, վիրակապված մարմիններ: Արնոտ շորեր: Մի կերպ անցանք Աշտարակը: Մեր գլխավերևով դեպի Լենինական է ձգվում գորշ կանաչ ուղղաթիռների աղմկոտ երամը: Դրանք մի ժամանակ ուզածիդ պես վարում-ցանում էին Երևանի երկինքը: Իսկ հիմա բժիշկ, դեղորայք, մթերք են տանում երկրաշարժի գոտի: Ա՜հ, տարօրինակ կյանք. սպանում է, որ փրկի, փրկում է, որ սպանի:

Լենինական…

Ուղիղ քառասուն օր անց, ողբով լցված մի գիշեր, ես ծնկի կիջնեմ գերեզմաններիդ դիմաց և կհիշեմ մի մարդու՝ նույնպես ծնկի իջած ու գլուխը սառցակոլոլ գետնին խփելով: Իբրև սովորական պատկեր՝ կհիշեմ, և իմ երակներով սառույց կհոսի: Եվ կմտածեմ, Լենինական, որ քեզ նման քաղաք չի եղել աշխարհում: Եվ այլևս չի լինի... Եվ այլևս հավիտյանս հավիտենից: Տեր իմ, ինչո՞ւ հողը մեզ մղկտացրեց: Այս հող երեխան: Կապը կտրած, անգութ, անբախտ, առանց մեզ քարուքռա այս վայրենին: Մեզ պատիժ ու պարգև այս կոշտ և փխրությունը: Այս անժամկետ խռովությունը: Մեր ոտաց տանիք այս աստվածությունը: Մեր արյան անտակ սափոր այս տապանաքարն ու տապանը: Մեր տխուր աչքին, մեր նախշքար ձեռքին, մեր ավետյաց փառքին, մեր ծովընդծով լացին ու երազին մատաղ այս հայտնությունը: Մխիթարության կարոտ այս սևավորն, ախր, չի՜ թողնում, թե ի մի բերենք մեր հոգու և մարմնի բևեռները:

Քաղաքի վրա ծնկած երկնքում սևն էր: Անթափանց, դավադիր խավար: Ի՞նչ էր դա. երկրաշարժի փոշի՞, թե՞ խտացած անեծք: Շիրակի երկինք, որ Անիի ավերակների և վաղնջական շենության արտացոլքն է ներառել իր ծալքերի մեջ: Ագահ, անշնորհակալ երկինք: Քի՞չ էինք աղոթել: Ասա՝ փոխարենն ի՞նչ էիր տվել մեզ, որ ետ առնել չէիր կարողանում. հո՞ղ՝ լեռներ, դաշտեր, անտառներ... ջո՞ւր՝ գետեր, լճեր, ծովեր... Թե տվել էիր՝ արնախում ու անկուշտ թշնամիներիս աչքը լույս: Էլ ի՞նչ էիր տվել, որ ետ առնել չէիր կարողանում. քանքա՞ր, հարատևո՞ւմ… Է՜, թքած, եթե այս գնով է՝ արյամբ ես մարում պարտմուրհակդ: Այո՛, թքած, քանզի արդեն սարսափում եմ ինձ վրա տապանաքար դարձող իմ իսկ խոնարհությունից: Դե ասա. ի՞նչ էիր տվել մեզ, որ ուրացանք: Իսկ հիմա ձյուն է գալիս: Հիմա ձյուն է նստում Լենինականի, Սպիտակի, Կիրովականի, Ստեփանավանի, Արթիկի վրա: Ձյուն է նստում Ջաջուռ գյուղի վրա և Մինասի երիցս խաչված կտավներից արյուն է բխում առ ի քեզ. էլ ո՞ր աստծո ջրաղացին ջուր տանք՝ մեր աղունի ալյուրից էլ ուրախության ճերմակ հաց թխվի, էլ ո՞ւմ դուռը ծեծենք, որ մեզ անշահ ներս առնեն, էլ ո՞ր դրախտին հաճոյանանք՝ մեր մանուկները թը՜ռնելով տուն գան, և մեր ցավը գեթ մեկ անգամ դավաճանի մեզ:

Տարօրինակ է, որ այսքան ողբի, իրարանցման, աղմուկների մեջ էլ կա լռություն, կոպիտ, քարքարոտ, չմարսվող լռությունը բարձրացող ավերակների և իջնող պատանքների.

Գյումրին չկա, տեղը վերք է,
Ծո, ո՜վ պիտի վրեն սգա…

Եվ ինչպե՞ս եղավ, որ այս տողերը գրվեցին երկրաշարժից 9-10 տարի առաջ: Այն ժամանակ, այո, հենց այն ժամանակ, երբ ազգային կողմնորոշիչների ու Գյումրվա համուհոտի ասֆալտապատման վտանգը կար: Սոսկալի վտանգ ու սարսափ, որ հետագայում 1988 թվականի նախանշան պիտի դառնար: Եվ դա հատկապես այն ժամանակ էր, երբ «Լայնարձակ է հայրենի երկիրն իմ»-ի փեշերը մանրակրկիտ բարձրացնելով, քոնքքոնքալով անցնում էր համահարթեցում կոչված տիրակալության նոր գահ-ֆայտոնը՝ ջրի երես ելնող մանկուրտիզացիայի մունետիկը... Եվ հետո կարծես 1988 չէ ու 451 թիվ էր, 88-ի փետրվար-նոյեմբերյան դարագլուխ մաքառում չէ ու 1918 թվի Անկախության ավետաբեր մայիս էր: Ազգի օրերը տաքանում էին: Շեփորածաղիկն էր բացվել: Բուրում էր... է՛հ, երևում է՝ մենք իրար լավ չգիտենք. երկինք՝ առաստաղ մարմնի, մեր գոյապաշտությունը բկիդ չկանգնե՞ց, ու հող՝ առաստաղ հոգու, մեր անհատնում արյունը քեզ չկշտացրե՞ց: Ախր այդպես չեն խփում անգամ ստորին, պարտուրացին: Չէ՛, ես չեմ դժգոհում Աստծուց, աստվածներից: Պարզապես, երբ Հայկական ժամանակը կանգ առավ 11 անց 41 րոպեի վրա, ես ստույգ գիտեի, թե ինչ եմ խնդրում, առաջարկում, ի վերջո՝ պահանջում՝ հոգիս բերանս հասած: Այո՛, ես գիտեի, թե ում և ինչի համար եմ ելել պարզճակատ ու արքայական: Եվ այսօր... Ա՜հ, այս ի՜նչ թշնամի էր՝ եկավ ծուռումուռ, պարպվելով, սրտիս նշան բռնած: Այս ի՜նչ նոմադ էր, թե՞ հողը չդիմացավ մեր հին գոյության ծանրությանը: Ու խրվում ենք: Եվ խրվում ենք Փոքր Մհերին արյունակից ու ժառանգորդ մեր գոյությամբ:

Օրեր անց Երևանում զարթնեցի անզուսպ հեկեկալով: Այդպես չար երազից հետո քնից վեր թռած երեխան է հեկեկում: Ու սիրտս միաժամանակ դատարկվեց: Ու ես, որքան էլ զավակն իմ ապերջանիկ ազգի, սակայն կամեցա ապրել: Ապրել նորեն և ի հեճուկս ալլահի, որ, ասում են, մեր անհնազանդությունը երկրաշարժով պատժեց: Կամեցա ապրել հատկապես ի հեճուկս այդ ալլահի արբանյակների, որ թաքուն ու բացահայտ չարախնդացին, որ ընծայաբեր նամազի չոքեցին գոհությամբ: Եվ այս օրերին, ամեն հայ, պիտի գեթ մեկ անգամ ինձ ու երեխայի պես՝ հեկեկալով, ոտքերը ցած կախի մահճակալից, կիսամերկ նստի ու շարունակի անզուսպ, անկաշկանդ հեկեկալ: Թե չէ, գիտե՞ք, մեր սրտերը կարող են անգութ, անանց ցավից բռնկվել ու ածխանալ: Եվ, հավատացեք, այն ժամանակ մեր Աղջկադեմ մոլորակն էլ չի ծաղկի: Մեր փոքրիկ, կրծած, մաշկած, խաչված Հայաստանը...

Լանք ու սիրենք, ջրատարնե՛րս: Հիմա կասեք՝ բառեր, բառեր, բառեր... Գուցե բառը ոչինչ չարժե: Համաձայն եմ՝ ոչինչ չարժե: Սակայն Տունը բառ չէ, երբ իր պատերի ջերմությամբ մանկան ծնունդ է ապահովում: Հայրենիքը բառ չէ, երբ սահման, զինվոր ու դեսպան ունի: Եվ այս անգամ էլ մեզ անակնկալի բերած երկրաշարժը նմանապես բառ չէ, երբ քանդում է նույն Տունը և ճակատագրից զրկում այդ տան ծնունդ մանկանը, երբ գերեզմանոցների է վերածում այդ նույն Հայրենիքը: Եվ իբրև իմ՝ ապրողիս ողբասացության սկզբի վերջ, ասեմ՝ Հայրենիքը բառ է լոկ այն ժամանակ, երբ հատկապես գիտակցաբար տրորում են նրա բաց Վերքը: Եվ երկրաշարժն էլ է բառ, երբ այն աշխարհի առաջ են գցում՝ նույն Վերքը կտցելու մարտահրավերով:

Տեսնես ե՞րբ էր. ժողովուրդն Անի քաղաքս ողբաց.

Անին չեն, աշխարհս ավեր,
Աշխարհս չեն, Անին ավեր…

Ու հանկարծ, շատ հետո, չգիտեմ էլ, թե քանի դար հետո, հնչեց ուրիշ մի ողբ, եկավ ուրիշ մի ձայն և կանխազգացման սարսուռով արտաբերեց. «Ծո, ո՜վ պիտի վրեն սգա…»: Բայց ես ուզում եմ ասել, որ սգացող մնաց, բանաստե՛ղծ Արա Արթյան: Ապրող էլ մնաց, ջրատա՛ր ախպերս: Ուղղակի ապրելու սիրտ չմնաց: Սրտին բաբախելու տեղ չմնաց, որ ինքն իրեն բաբախելով մխիթարի, բաբախելով սպիանա:

Արդեն 60 օր է ես մլուլ եմ տալիս ավերակների շուրջ: Անզոր կանգնած դոփում եմ այն ամայությունը, որտեղ աղետաբեր չորեքշաբթվանից առաջ վեր էին խոյանում կամ արդեն խոյացած էին մեր ժամանակի նվաճումներին հավատարիմ-շուն կառույցները, և ոչ մի կերպ գլուխս չի մտնում երկրաշարժ բառի իմաստը: Տե՛ր իմ, ի՞նչ անեմ, ո՞ւմ դիմեմ: Գլուխս առած՝ ո՞ւր չքվեմ, որ այդ բառն ինձ հանգիստ թողնի, կամ ես հասկանամ, թե վերջապես ի՜նչ է ասել դա... Լենինականում մնացած հատուկենտ երեխաներն ահա այսպիսի խաղ են հնարել. հավաքվում են մի տեղ, գլուխ գլխի, քիթ քթի կպցրած քչփչում ուրիշ՝ անկապ բաներ, և հանկարծ նրանցից մեկը, որ նախնական պայքարում վաստակել է այդ իրավունքը, սաստիկ բարձր ձայնով բղավում է՝ ԺԱԺՔ…

Ու սարսափած, խելագար ցատկում են հեռու, բոլորն ահով նետվում են հեռու: Հեռու՝ ընդհուպ մինչև այն օրերը, երբ իրար ձեռք ու փեշ բռնած, շարվեշարան անցնում էին բակերով ու զիլ կանչում.

-Ղարաբաղը մերն է, բայց թյուրքերի ձեռն է, պապան գնաց ցույցի, որ ապա-

ցուցի…

Արդյոք այս բևեռումներից չի՞ ծագում ***երկրաշարժ*** բառի բանաձևը՝ հաղագս անհավանականության տեսության:

Ու ես մտա Լենինական:

Հին, ծանոթ, զվարթ, ծեսով քաղաք: Ծանոթ, դժվար, բարի, լեզվանի քաղաք, որտեղ հիմա ժամանակը կանգնած է՝ ինչպես սիրտն է գահավեժ կանգնում հանկարծ: Բայց եկեք պայմանավորվենք այսպես. այո՛, անշուշտ, ես պատմելու եմ անհավանականի մասին: Ես պարտավոր եմ դա անել: Հիմա պատմելն իմ խաչն է: Որտեղ իմ խոսքի և ձեր պատկերացումների վերելքն անտանելի կդառնա, ու սաստիկ կցավեն ձեր սրտերը, խնդրում եմ, համարեք, որ այդ անաստված ցավը խախտված, փչացած երևակայությանս մեղքով է ձեզ տրվում: Նաև խնդրում եմ, որ դուք ուժե՛ղ լինեք, արի՛ լինեք, քանզի, ինչպես արդեն հասկացաք, դժվար է այս՝ անհավանականության գագաթ բարձրացող սուրսայր խոսքիս ճամփան: Միասին, գլխարկներս հանած, խոնարհ, ոտաբոբիկ անցնենք սառած, վառվող այդ ճամփան: Անշշուկ անցնենք՝ խլացնելով մեր սրտերի պայթյունը, քանզի ննջող մանուկներ կան Լոռվա ու Շիրակի գերեզմանոցներում: Արքայամանուկներ: Արքայադուստրեր…

Երևի հիշեցիք Տերյանին.

Մի՞թե ես պիտի երգեմ քեզ օրոր,

Եվ արքայական դնեմ գերեզման…

Ու նույն ճամփան նորից խրվում, մխրճվում է առաջ, անկանգ առաջ: Ու կեռեր, կեռեր: Սուրսայր կեռերը ժամանակի և գոյության: Ու ներսս տնքում է ատելության ծանրությունից: Ու գոյանում է ինչ-որ բանի դեմ, այդ ինչ-որ բանին ընդդեմ ելնելու ծանր ալիքը, որ վաղո՜ւց արդեն իններորդ է հռչակված: Հետո, ահա, շենքերի տեղը ավլած, սրբած է: Հարթ, ամայի՝ կարծես շենքերը մեկնել են քաղաքից: Կարծես շենքերի զորահավաք է եղել հեռու մի զորակայանում: Հեռու, անտես մի բանակատեղիում, ուր մեկնած շենքերն ուղիղ գծով, կողք կողքի և զգաստ շարվել են. փլվելու վարժություններից առաջ և հետո, լինելուց առաջ և հետո՝ ցկյանս: 10.01.89 թվի արևոտ կեսօրին անցանք քաղաքի այն թաղամասերով, որ նախկինում՝ արդեն չորեքշաբթվանից այս կողմ, ես չէի եղել: Չէի էլ ուզում լինել: Ու գնացի: Այո՛, ի՞նչ արած, գնացի, որ մարդ կոչվածիս փոքրությունը տեսնեմ: Եվ գնացի, որ փոքրությունս ողբամ, այս ժամանակների ծնունդ լինելս ողբամ, թեև մի երկու ամիս առաջ այլ էի՝ հպարտ էի մեր գոյության առեղծվածին մերձ լինելու բախտիս համար: Բայց գնացի, որ ծնկներս ծեծեմ, քանզի սկզբում բոլորը միայն այդ էին կարողանում անել…

Հե՜յ, հայորդի՛, ողբացի՞ր: Ուրեմն՝ ե՛լ: Սրբի՛ր արցունքներդ: Թա՛փ տուր ծնկներիդ փոշին: Ուղղի՛ր մեջքդ: Եվ ձի՛գ տուր՝ Զանգակատան պարանը ձգի՛ր, հե՜յ Տիգրան Մեծի Զարմ:

Երևան, 1989

ԳՅՈՒՄՐՈՒ ԿԵՐՊԱՐԸ ՎԱՀԱՆ ԹԱՄԱՐՅԱՆԻ «ԳՈՅՈՒԹՅԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԻՆ ՄԵՐՁ» ԷՍՍԵՈՒՄ

Մեր յուրաքանչյուր պահի վկայությունն է…

Վ. Թ.

Վահան Թամարյանի «Գոյության առեղծվածին մերձ» խոհագրությունը՝ գրված 1988 թ. դեկտեմբերի երկրաշարժից անմիջապես հետո, գրական-մշակութաբանական առումով ոչ միայն անհատական վկայություն է, այլև հանրային հիշողության գրական դրսևորում: Գյումրին (նախկին՝ Լենինականը) այստեղ հանդես է գալիս ոչ թե պարզապես աշխարհագրական տարածք, այլ որպես հայի ճակատագրի խորհրդանիշ, որով ընթերցվում, բացահայտվում է ոչ միայն աղետի իրականությունը, այլև ամբողջ ազգային պատմության ժառանգությունը:

Ուշագրավ դրսևորումներ է ստանում ողբերգությունների, տապանագրերի, բանահյուսական տեքստերի ավանդույթը, որտեղ քաղաքը պատկերված է որպես տառապող և աղետ ապրող կերպար, կենդանի էակ, որի մարմինը վերածվել է բաց և անդադար մխացող վերքի:

Գրական կապը անցյալի հետ (Անի, Կարս, Վան) արտահայտվում է ողբերգությունների հավերժական կրկնության գաղափարով:

«Շիրակի երկինք, որ Անիի ավերակների և վաղնջական շենության արտացոլքն է ներառել իր ծալքերի մեջ»:

Այսպիսով, Գյումրու կերպարը ներառվում է պատմական շարունակականության մեջ՝ դառնալով այնպիսի քաղաք, որ միաժամանակ և՛ զոհ է, և՛ հիշողության կրող:

Գյումրին դիմադրության քաղաք է. նույնիսկ ավերակների մեջ մշակույթը (հումորը, խոսքը, ավանդույթները) պահպանվում է՝ վերածվելով մնացորդային, բայց անխզելի ինքնության:

Սրանով հանդերձ՝ Թամարյանի արձակը առանձնանում է ոճական բազմաշերտությամբ՝ համադրելով փաստագրական նկարագրությունը, բանաստեղծական պատկերավորությունը և պաթետիկ հնչերանգը: Օրինակ՝ քաղաքը ներկայացվում է որպես կենդանի օրգանիզմ, որի մարմնի վրա բացված է վերք. «Գյումրին չկա, տեղը վերք է»:

Հեղինակ-վավերագրողը օգտագործում է նաև հզոր, անսպասելի, գերսրված զգացողություններ արտահայտող մետաֆորներ, որոնք ընդգծում են ոչ միայն ավերածության մասշտաբները, այլև նրա հոգևոր հետևանքները.

«Քաղաքի վրա ծնկած երկնքում սևն էր: Անթափանց, դավադիր խավար: Ի՞նչ էր դա. երկրաշարժի փոշի՞, թե՞ խտացած անեծք»:

Այսպիսի պատկերներով քաղաքը վերածվում է ոչ թե ֆիզիկական ավերակի, այլ միաժամանակ նյութական ու մետաֆիզիկական ողբերգության խորհրդանիշի, որով ավելի ակներև են ուրվագծվում Գյումրու կերպարակերտման առանձնահատկությունները.

1. Քաղաք-վերք. Աղետից հետո Գյումրին ներկայացվում է որպես անբուժելի վերք, որը բաց է մնում ինչպես հողի, այնպես էլ ժողովրդի հիշողության մեջ:

2. Քաղաք-հուշարձան. Ամբողջ տարածքը նկարագրվում է որպես գերեզմանոց, որտեղ տապանաքար է դառնում նույնիսկ փլատակված տների հիմքը.

«Այո՛, թքած, քանզի արդեն սարսափում եմ ինձ վրա տապանաքար դարձող իմ իսկ խոնարհությունից»:

3. Հեղինակը նկարագրում է քաղաքը՝ որպես քաղաք-ստվեր կամ քաղաք- ուրվական՝ անհետացող, բայց ներկա հիշողության և գրականության մեջ:

«Կարծես շենքերի զորահավաք է եղել հեռու մի զորակայանում»:

4. Քաղաք-ազգային խորհրդանիշ. Լենինականը դառնում է հայ ժողովրդի գոյության մետաֆոր. ինչպես քաղաքը, այնպես էլ ժողովուրդը ստիպված է գոյատևել ավերակների վրա:

Թամարյանի արձակը միահյուսվում է հայ գրական ավանդույթին: Այն հիշեցնում է թե՛ Ավ. Իսահակյանին. բանաստեղծը տևականորեն վերապրում է ժողովրդի պատմական ու սոցիալական ծանր վիճակը, թե՛ Վահան Տերյանի նուրբ ու հուզական պատկերները.

«Մի՞թե ես պիտի երգեմ քեզ օրոր //Եվ արքայական դնեմ գերեզման»:

Այս կերպ, Գյումրին դառնում է հայ գրականության հոգևոր մայրաքաղաքներից մեկը, որտեղ ցավը, կորուստը և հիշողությունը վերածվում են ազգային ինքնության անբաժան մասի:

Վահան Թամարյանի «Գոյության առեղծվածին մերձ» արձակում Գյումրի-Լենինականը հանդես է գալիս որպես մետաֆորային և խորհրդանշական քաղաք, որը միաժամանակ և՛ իրականություն է, և՛ առասպել: Այն պատմության շարունակվող ողբերգության մարմնավորումն է, որից սակայն բխում է նաև ապրելու և դիմակայելու գերակա մղումը:

Ռոզա
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՐԻՉ

ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉՅԱՆ

1988, 1992, 1994...2014, 2016, 2020, 2023...

Ու դեռ 52 տարեկան…

-Դպրոցում լա՞վ եք սովորել:

-Շկոլո՞ւմը: Շկոլը կռվեն վախտն ըմ պրծալ՝ պատրոն ըմ իլալ հվքելիս:

-Իսկ մասնագիտությո՞ւն՝ ինչ-որ տեղ սովորեցի՞ք:

-Ա հի՞նչ մասնագիտություն: Լյավ կրակ տալիս ըմ իլալ, ափսոս, տեխնիկա չի իլալ, վեր քշեի: Պռավաս տանկը քշելավ ըմ ստացալ:

-Ինչո՞վ էիք զբաղվում, երբ արդեն ամուսնացաք:

-Հը՜… խոխորցը ծնունդներին պոստան քշնալիս ըմ իլալ տոն, մին քանի գունավոր նկար ծերքիս նորից պիցրնալիս պոստերը: Թա բախտերս պերեր մեր ծնունդներն էլ կնշեինք, իսկ եթե բախտներս պերեր վեչ՝ ծառայակից հինգերներս մեր երկնային ծնունդը կնշեին:

-Հիմա ինչո՞վ եք զբաղվում:

-Մեբելի գործ ըմ սվերում:

Լավ մասնագիտություն է, հնարավորություն կտա ապրուստ գտնելու:

-Հինգիդամ է: Առաջին օրը քեցի, տեսի դագաղ ըն սարքում: Տուրս եկավ:

-Դագա՞ղ, ո՞ւմ համար:

-Ա՜, չէ մատաղ: Մարդու հետի չար: Եկեղեցական տոնի հետի ար: Բայց մի տեսակ մեջս միտավ, ուզեցի էս գործավ զբաղվիմ: Վեր սկսում ըմ գործ անելը, հերթավ հնգերներիս ըմ հիշում, թա հյուր ըն առանց դագաղ թաղալ… պապուս հանգիստը… տղորանցը… Լոխճին: Սրտանց ըմ սարքում, սաղ դարդ ու ցավս մեջին ըմ տեղավորում: Իմ ու քու արև, էս գործը հոգեբանից ավելի ա օգուտ տվալ ինձ:

-Ինչի՞ համար եք ափսոսում:

-Հինգիդամ, մատաղ հինիմ: Կնեռիս, վեր մեր լյուզվավն ըմ խոսում, բայց էդա իմս: Ափսոսում ըմ, վեր Արցախը կրացալ չըմ նհետս պերիմ:

-Չէ՜, ավելի անձնական, ընտանեկան՝ առօրյայում:

-Սրտիս դարդ ա տեռալ, վեր էն շան տղի յրա էդքան խոսալ ըմ:

Ցույց տալով փոքր տղային.

-Կռվից երկու ամիս առաջ ար, թոփավը քացի-քացի ար անում, տվից՝ ակուշկին շուշան ճարթից: Թակալ չըմ, բայց լավ ճղճղացալըմ յրան, մին խիլլա լաց ա իլալ, շան լակուտը: Ա՜, վեր գիդայի վերջը ստի ար տռնելուվ, ես էլ նհետը սաղ շուշեքը կփշրեի:

-Իսկ կենդանիներ ունեի՞ք:

-Ամեն հինչ էլ իլալ ա՝ տավար էլ, խոզ էլ, ծի էլ, շոն էլ: Կյալան առաջ մղակը պեց ըմ ըրալ, լոխճին թողալ քինան: Բայց տուզիկը… տուզիկին աչքերը կարում չըմ մննաս քցիմ: Ասում ըն հեյվան ա, դե հինչ ըրած, բայց մին ա, տրան աչքերը, հիասթափությունը, վախը: Գիդում ըմ, վեր ներելուվ չի ինձ: Ես ինքս էլ ինձ ներելուվ չըմ:

-Բլոկադային ո՞նց էիք դիմանում:

-Տեմ կնալիս ընք լի իլալ: Մհենգ, վեր ըսեինք քինա ծեր տոն, բայց էլի բլոկադայա ինան, չքըչոք կքիայի: Շենումը հեշտ ար՝ ապրուստը տանան ար: Մեսը կար, մնացածն էլ մին ձևի ճրելիս ընք իլալ: Վերջին շաբաթն ար, մի հափուռ մակառոն ար մնացալ, հարթը սարքալ ար, խոխորցը ըռչին տիրալ: Եշում ըմ, տեսնում ճկճոկի ընելով ըն օտում: Մին էլ տեսնամ՝ մեջին սև կետեր կան: Ավելի մոտիկից յեշեցի, տեսնամ կուճիր կուճիր պղոճներ կան մեջին: Հինգ ամիս հարթնը պահալ ա շկաֆին աչքումը՝ վրթնկալալալ, բայց մին ա լի, կերալ ընք:

-Հիշո՞ւմ եք տան դասավորությունը, թե՞ արդեն մշուշվում է:

-Հիշում ըմ: Իմ արև, սպասում ըմ, թա հիբ ա մթնելուվ, վեր քոն հնիմ, քինամ մեր տոն: Ամեն օր վենավ շենավը շոռ ըմ տամ: Ամեն քարի, թփի յեշում ըմ, վեննավ պիցրանում ըմ մեր տոն, հայաթին մղակը պեց անում, նի մտնում: Բոստանավը շոռ ըմ կյամ, հեյվանին խոտ տամ, բոստանին շլանգին ճյուրը կամացացնում, նստում ծառին տակին մին սիգարետ քաշում: Հետո քինամ ըմ երկու խնձոր պուք տամ, շալվարիս յրա սիրփում՝ օտում: Նստում ըմ քարին ու յեշում, հունց ա բաբոս լոբի հնդրում: Հարթնը կոֆե ա պերում, նորից սիգարետ ըմ միացնում: Նի ըմ մտնում տոն: Դամաշնիկներս կենում, քինում դիվանին պառկում: Խոխերքը պուլտը տամ ընք, տելեկը խոսում ա: Քարոզարշավ: Սերիալ: Կանցերտ: Մուլտիկ: Մի քանի ճանճի տզզոց: Կուճիր ստոլիկ, վազով ճողոպուր, խորյագի հոտ: Խոխոց խաղ: Լազաթ: Մինակ Տուզիկը չկա:

-Ի՞նչ եք մտածում, այսքանից հետո ո՞նց շարունակել ապրել:

-Հինգիդամ: Ասում ընք՝ 52-ը շատ հեռու չի վերջան, կարող ա հսցնիմ առանց կռվե ծերանամ: Չնայած…

Արփա ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՎԵՐԱԴԱՐՁ

Արևն աշխարհի եզրերից ցոլքերը մեկտեղել և երկնքի կապույտ կոպերի արանքից ջերմացնում է հողը: Ես հայացքս առանց շեղելու հիանում եմ Մասիսի պայծառ ժպիտով, որն ավելի հրապուրիչ է դարձել արևի շողքերի սիրախաղից: Փորձում եմ վերհիշել՝ ով էր Զվարթնոցի տեղն ընտրել: Ամեն թռիչքից հայացքիդ մեջ դաջվում են մշուշի մեջ ծփացող մի քաղաք և կարոտն աչքերում խեղդող մի Մասիս:

-Տաքսի պե՞տք է,-ակամայից ուշադրությունս շեղեց չսափրված մի երիտասարդ:

Պատասխանը մնաց շուրթերիս, երբ նույն խոսքերը լսեցի մեկ ուրիշի բերանից: Հարցերի տարափը դադարեց, և երկու նուրբ ձեռքեր, պարանոցիս փաթաթվելով, խեղդելու աստիճան գրկեցին ինձ: Դեմքս սկսեց թրջվել աչքերիս հուզմունքից:

-Բարի՛ գալուստ, պապի՛:

Տարիների կուտակված կարոտը ալեկոծեց ներաշխարհս: Գանգրահեր ձագուկս կերպարանափոխված, հասուն աղջկա կեցվածքով կանգնած էր դիմացս:

Տասնամյակից ավելի դադար և վերադարձ: Ես փորձում էի հասկանալ՝ ի՞նչ էի կորցրել, թեև մի բան պարզ էր՝ Հայաստանում դու միշտ դիմավորող ունես: Իմ վերադարձը վերածննդի պես մի բան էր:

Մինչ մեքենան, արագություն հավաքած, ընթանում է, ես բաց պատուհանից հաճույքով վայելում եմ ընթացքից դեմքիս հպվող քամու հարվածները: Գարունը կոտրել է բոլոր դարպասները. խտացած քաղաքի մեջ թույլ հնչեղությամբ տարածվում է գարնան սիրո էլեգիան: Շենքերն իրար չզիջող ըմբշամարտիկի կեցվածքով՝ ձեռքերը մեկնած, խցկվել էին իրար մեջ: Մայթերի եզրերին մնացած հատուկենտ ծառերը շողում էին սպիտակ հանդերձանքով:

-Այստեղ քաղաքապետարանի ձեռքը դեռ չի կպել, իսկ սրանք սակուրաներ են՝ նոր Հայաստանի խորհրդանիշը,-մատնացույց անելով դիմացի մայթի վարդագույն ծաղիկներով ծառերը՝ ուշադրությունս շեղեց Արփիս:

Նոր Հայաստա՞ն,-զարմացա ես:

-Էհ, պապի՛, ամեն ինչ այնքան ուրիշ է հիմա: Ժամանակի հետ հայի գենն էլ է «փոխվել»: Մարդկանց կեսը Ամերիկա է գնում, մյուս կեսը՝ Եվրոպա, մի զանգված գոռում է՝ դեմ է ռուսականացմանը: Մնացածը՝ նախկին ու ներկա:

-Եվրոպայի հարդարված փողոցները, իրենց կեցվածքով խիստ տարբերվող մարդիկ, որոնք բացօթյա սրճարաններում ննջում են սուրճի բաժակի շուրջ, խորը դեկոլտեով կանայք, որոնց կիսաբաց որովայնը ոսկու փայլ ունի, մեր խառնվածքի համար չափազանց օտար են: Գուցե ես էի ծեր Եվրոպայի համար:

-Ասում են՝ այնտեղ ազատություն ա:

-Ինչի՞ ազատություն: Այնտեղ անտարբերություն կա:

-Ժամանակները փոխվել են, հարազա՛տս: Իմ միտքը քեզ խորթ է: Մարդիկ պարզապես ուզում են վայելել կյանքը՝ փաբերում լիցքաթափվել, գինովանալ, փողոցում ճեմել՝ հարդարված տեսքով: Կյանքի սահմանափակումներին «ոչ» ասել, չտառապել հարևանի կարծիքի համար: Եվ սա ընդամենը մտքիս անկյունում ծվարած ճշմարտության մի մասն է:

Արփիի խոսքերից միտքս սառել էր, ես սկսում էի կասկածել՝ արդյո՞ք Հայաստանում եմ: Մի պահ լուռ էի, բայց ներսումս բորբոքված մի կրակ այրում էր հոգիս.

-Մենք՝ հայերս, շարունակ բողոքում ենք իրականությունից, բայց այս երիտասարդը «Տեսլա» է վարում:

-«Տեսլա» վարելու համար պարտադիր չէ հարուստ լինել,-ժպիտով խոսքս եզրափակեց Արփին:

Ես լռեցի, քանզի այդպես էլ չհասկացա՝ ո՛րն է հարստության չափը: Մեքենան, անասելի արագությամբ անտեսելով արագաչափերն ու փոսերը, ծանրացող օրվա մեջ թողեց բաց պատշգամբներից փողոցը զննող, մետրոյի գետնանցումներում հայացքները ժամացույցին սևեռած, սրճարաններում մեկ բաժակ էսպրեսո կամ գարեջուր խմող երևանյան հասարակությանը: Քաղաքից դուրս այլ աշխարհ էր: Ծաղկած ծիրանենիները՝ նորահարսի տեսքով, փողոցի եզրին իրարից խռով, գլուխները կախ լույսի լապտերներ՝ արագիլի բներով զարդարված: Ես կանգնեցրել էի մեքենան և կորցրած հարազատի ջերմությամբ դողացող ձեռքերով գուրգուրում էի հողն ու ագահորեն խմում ցայտաղբյուրից շատրվանող սառը ջուրը:

-Ա՜խ այս երկիրը…- և խոսքը մնաց բերանումս:

-Քո աչքերից արցունքի փոխարեն կարոտ է կաթում, բայց եթե ասեմ՝ Մասիսը, Սիփանը կամ Նեմրութը քողարկի՛ր հոգուդ ամրոցում, չնեղվես, -գլուխն ուսիս խոնարհելով՝ միտքս ընդհատեց Արփին:

-Այստեղ չկա անցյալին վերադարձ, կա մի Երևան, իսկ Երևանի մեջ՝ մի Հայաստան:

-Իսկ մնացա՞ծը, Արփի՛:

-Մնացածը մնացած է: Հեղափոխությունից հետո մարդիկ սկսեցին սնվել այլ գաղափարներով ու արժեքներով: Բայց պատերազմի բոցը մշուշի մեջ քողարկեց հասարակությանը: Հիմա ամեն խոսքի մեջ վիշտ կա, ատելություն, ցավի մեջ մեռնող պայքարի հույս: Սոված գայլի հոգեբանությամբ հասարակության մեջ ոռնում է մեկ գաղափար.

-«Մենք խաղաղություն ենք ուզում»: Սա մերօրյա Հայաստանի զարգացման մոդելն է: Արփիի խոսքերը խեղդում էին կոկորդս: Ես՝ կարոտաբաղձ նվաստս, քիչ էր մնում փոշմանեի վերադարձիս համար: Երբևէ չտեսած, չլսած մի երևույթ: Մի բուռ երկիր, բռիդ մեջ տրոփող մի սիրտ՝ տարբեր գույներով: Այլայլված, ցամաքած մի սիրտ, որից սնվում է մի ամբողջ ազգ, իսկ մենք նորից քայլում ենք այդ սրտի վրայով՝ սպանելու նրա ապրեցնող ջիղը: Մինչ մենք շարունակում էինք ինձ հարազատ, լքված, բայց չմոռացվող ճամփան, կոտրելով հոգեսպան լռությունը՝ ես սկսեցի մտքիս ազատություն տալ.

-Իսկ ո՞վ է խելագարվում պատերազմի համար, ո՞վ է գիշերն անքուն լուսացնում, որպեսզի շնչի վառոդի հոտը: Գուցե դուք՝ երիտասա՛րդ:

Վարորդը, ղեկը ձեռքերի մեջ սեղմած, դժգոհ հայացքով հայելու միջից ինձ էր նայում: Ցասում, գուցե ատելություն, ինչ-որ բան հաստատ ծնվեց կամ արթնացավ նրա ներսում:

-Կարոտ, անբավարար, գուցե կեղեքող, սպանող կարոտ: Կապ չունի հաջորդականությունը, բայց հաստատ դրանցից մեկը դեռ ապրում էր իմ ներսում: Թուլացած մաշկիս տակ տրոփող, կծկված սրտիս մեջ ինչպես արյան ճնշում այն տանջում էր ինձ: Եվ հենց սա էր իմ ու ներկա սերնդի տարբերությունը: Բարձրաձայնե՞լ, թե՞…

-Հորիզոնի ճոխության մեջ փառաբանվող, արեգակի նոսրացող ցոլքերի տակ ծգվում էր իմ ճամփան: Ես անհագուրդ տենչանքով հայացքս մխրճել էի ամեն թվացյալ շարժի մեջ: Հիշողությունն իր սուր հոտով տարածվում էր շուրջս: Լեռների մեջ ծվարած այս փոքր երկիրը, մերկ սարերը, որոնք նոր էին սկսել հանդերձանքով զուգվել, ձեռքերը պարզած՝ կանչում էին:

-Ուշադիր նայի՛ր այս բարձունքներին, մինչ դու հիանում ես նրանց սրագագաթ կեցվածքով, լեռների տակ ծվարած գյուղերը դառնում են համայնք՝ ծերացող, նոսրացող: Տների պատուհանները խամրում են կարոտից, սպասումից: Ամեն տան շեմքին կամ պատուհանի դիմաց ծերացած մի հայացք մթնում ու լուսացնում է սպասումով, բայց…

-Քաղաքի պերճությունը գյուղի զավակներին գամել է իր լուսավոր սրճարաններին: Մենք հեռանում ենք մեր արժեքներից: Հեղափոխությունը խժռեց իր զավակներին, մի ակնթարթում ջնջեց քո հիշատակած ավանդույթները, ինչպես և իր գաղափարները: Մեզ մնացել են արցունքի չափ մի հայրենիք և օտարամոլության տենդով հիվանդ մի հասարակություն: Ո՛չ ժողովուրդ:

Իրականությունից նեղված Արփին ճնշող առոգանությամբ այսպես ջանում էր հանգստացնել բորբոքված սրտի բռնկված կրակը, երբ չնկատելով ժամանակի ընթացքը, զգացինք՝ ինչպես մեքենան, անցնելով կամրջի վրայով, հաղթահարեց թեթև պատնեշն ու կախվեց ճանապարհի երկու կողմում փռված գյուղի շնչին: Տարիների ականը մի ակնթարթում պայթեց: Արցունքներն առանց հապաղելու սկսեցին հոսել կնճռոտված դեմքիս ակոսների միջով, ծանրացած ոտքերս հաստատուն կեցվածքով, արհամարհելով կռացած մեջքիս ցավերը՝ կանգնեցին հողին: Հողն օտար չէր, իսկույն ճանաչեց իր օտարացած զավակին և սկսեց ջերմացնել ոտքերս: Տարիներ շարունակ ես իմ ներսում այս օրվա լույսն էի պահել՝ այս բերկրանքը նորից ապրելու համար: Ծովի հայելուն բնորոշ կերպարանքով սարահարթի գյուղը ծփում էր մայրամուտի ներքո: Մամռոտ քարերը կերպարանափոխվում էին: Օդում մի տեսակ ուրիշ հոտ կար՝ խոնավության, հողի, արբեցումի ու կյանքի:

-Սա իմ Հայաստանն է, իմ տունն է, իմ սիրտը, Արփի, -խելագարի պես հուզմունքից գոռում էի ես:

Շենքերի տանիքներին փայլող արևային տաքացուցիչները մի տեսակ խորթ էին ինձ: Ժամանակի հետ գյուղը փոխվել էր, բայց մեր տուն տանող ոլոր ճամփան, իրար քթի կպած խաչաձև բադանները, մեր տան շքամուտքը նույնն էին, ինչպես երեկ և տասը տարի առաջ: Սեզը ընդարձակվելով հասել էր հարևան փողոց, ծառերը կանաչ էին, բայց անխնամ: Քանի տարի էր՝ մեր երդիկի ծուխը չէր ողջագուրվում երկնքի գրկում: Արփիի ասած լքված գյուղերը եկան աչքիս առաջ: Ներքուստ ես զգում էի, որ մեզ իրար կապող միայն մեր մեռելներն են մնացել:

-Նայի՛ր, հարևանի տան պատուհանից է՛լ լույսի շողք չի թափանցում: Երբ երեխա էինք, գյուղը պայթում էր կյանքի առատությունից: Թոնրի ծուխը գալարվելով երկինք էր հասնում, և լավաշի բույրից արբում էր սոված մարմինդ: Կին թե տղամարդ հողի մարգերի մեջ քրտինք էր թափում: Ես գյուղում չեմ ապրել, բայց խոպան հողերը աղետ են երկրի համար: Հողն ապրում է՝ մարդուն ապրեցնում:

Արփիի իմաստությունից հիացած՝ ես հուզված մատներիս շարժումով շոշափում էի տան հնամաշ պատերն ու մանկությանս շունչն առնում:

-Եթե պատերազմները քաղաքի էկրաններին էին իրենց արձագանքը թողնում, գյուղում ամեն տուն իր դռան հետևում ապրում է պատերազմով: Հայրենիքը բարձրանում է գյուղի ամրության վրա: Շինականն է կերտում երկրի դեմքը:

Առավոտյան շրջի՛ր գյուղում և հատուկենտ մարդկանց ծառերից կախված գերանդի կգտնես, գուցե և չգտնես: Ողջ գյուղում մի նախիր ու մի ոչխարի սուրու են սար բարձրանում: Շատերի այգիներն ու բոստանները մոլախոտը կերել է: Ղարիբ Կարոն, Լևոնենց Հենդոն, մեղվապահ Մացակի տղեքը էլ չկան: Դու գուցե ավագ սերնդի վերջին մոհիկանն ես: Մեր ներկայի վրա մի ծանր քար գլորվել և ճզմում է մեզ: Իսկ մե՞նք…

-Հոգուս մեջ մի հին երգ կարոտի նման մրմնջում էր: Հոգնած կոպերիցս թափվող արցունքները երախտագիտության ծափողջյուններ էին հղում կյանքին:

Իմ վերադարձը բառերով չնկարագրվող երջանկություն է, ես լուռ կքայլեմ այս լքված տան այգում, ամեն օր կնստեմ մի ծերացած ծառի շվաքին, մինչև մահվան հրեշտակը կմտնի գյուղ, դանդաղ կշրջի փոսերով լեցուն փողոցներով, թաղից թաղ, կհասնի իմ տան շեմին: Իսկ ես լուռ, աչքերս կկոցած կուլ կտամ ծխախոտի վերջին ծուխը՝ իբր չնկատելով նրա սուր, ծակող հայացքը…

ՌԱԶՄԻԿ ԴԱՎՈՅԱՆ-85.

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՊՀ-ՈՒՄ

2025 թվականը հոբելյանական է Ռազմիկ Դավոյանի համար: Տարեսկզբից նրա ստեղծագործական, հասարակական գործունեությանը, գրական ժառանգությանը անդրադառնալու լավագույն հնարավորությունն է տրված: Նախատեսված մեծ և փոքր միջոցառումների շարքում կարևոր նշանակություն ունեցավ «Համազգային» հայ կրթական և մշակութային միության, Երևանի պետական համալսարանի և ԳԱԱ գրականության ինստիտուտի՝ համատեղ կազմակերպած գիտաժողովը՝ նվիրված Ռազմիկ Դավոյանի 85-ամյակին:

Գիտաժողովի նպատակն էր համակողմանիորեն, գիտական բարձր չափանիշներով արժևորելու Ռազմիկ Դավոյանի գրական ժառանգությունը և հասարակական գործունեությունը:

Հոկտեմբերի 10-ին ԵՊՀ-ում կայացած գիտաժողովը ոչ միայն բանաստեղծի հիշատակի առջև խոնարհում էր, այլև ևս մեկ անգամ բանաստեղծի՝ այդքան տարբերվող ձեռագրի արժևորումն էր:

Գիտաժողովին մասնակցում էին մեկ տասնյակից ավելի գրականագետներ, լեզվաբաններ, արվեստաբաններ՝ Ա. Թամրազյան-Դավոյան, Ս. Խանյան, Ա. Ասատրյան, Դ. Գասպարյան, Ս. Աբրահամյան, Կ. Մարտիրոսյան, Ա. Ասլիբեկյան, Ա. Գալստյան, Հ. Սուքիասյան, Ա. Ափինյան, Ք. Աբրահամյան, Լ. Ղամոյան, Լ. Արտեմյան, Գ. Օհանջանյան: Զեկուցումների ընդգրկած թեմաները նույնպես բազմազան էին՝ հեղինակի պոեզիայի, գրապատմական նշանակության, «Ռեքվիեմ» պոեմի, վեպի և պիեսի, գրողի լեզվի և գեղարվեստի, տարբեր ժողովածուների, ինչպես նաև՝ բանաստեղծական տեքստերի մասին՝ մարմնավորված երաժշտությամբ:

Բացման խոսքում «Համազգային» հայ կրթական և մշակութային միության Հայաստանի գրասենյակի տնօրեն Ռուզան Առաքելյանը կարևորեց բանաստեղծի՝ անցյալն ու ներկան կապելու առաքելությունը հայ գրականության մեջ, Համազգային հայ կրթական և մշակութային միության կենտրոնական վարչության անդամ Արտաշես Շահբազյանը կարևորեց փաստը, որ գիտաժողովը Ռազմիկ Դավոյանի ստեղծագործությունները գիտական մակարդակով արժևորելու փորձ է: ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Արշալույս Գալստյանը կարևորեց գրողի թողած ստեղծագործական ժառանգությանը անդրադարձի արդիականությունը նոր սերնդի համար: Ռազմիկ Դավոյանի գրական-ստեղծագործական ուղին ամբողջացրեց կինը՝ լեզվաբան-թարգմանչուհի, Լոնդոնի համալսարանի լեզվաբանության դոկտոր Արմինե Թամրազյան-Դավոյանը: Նա նաև հանգամանալից ներկայացրեց հոբելյանական տարվա ընթացքում նախատեսված միջոցառումները՝ հետագա անելիքները:

Գիտաժողովը իսկապես կայացած էր՝ թե՛ զեկուցումների գիտական բարձր մակարդակի, թե՛ առաջ քաշված հարցերի և ընդգրկված թեմաների արդիականության առումով:

Առաջիկայում նախատեսվում է բոլոր զեկուցումները տպագրել մեկ ամբողջական ժողովածուով:

Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԵՏՀԱՇՎԱՐԿ

-Տեսնես որքա՞ն կտևի Աստծո
համբերությունը…
«Աստված Սեր է»,-ասում էր
սևազգեստ քահանան,
Ու մենք մտածում էինք, որ սիրո գույնը սևն է.
Հանգցնում էինք սենյակի լույսը,
Արտաշնչում էինք պատուհանի ապակուն
Եվ մատով նետահարված սիրտ նկարում
Երկնքի սև ֆոնի վրա…

-Տեսնես որքա՞ն կտևի Աստծոհամբերությունը…
«Աստված ողորմած է»,-ասում էին մեծահասակները
Այս ու այն կողմից,
Ու մենք, ապավինելով նրան,
Որ Աստված մեզ կողորմա ու միշտ կների,
Անտեսեցինք Աստծո բոլոր տասը պատվիրանները,
Աստված սկսեց զայրանալ
Երկրաշարժերի, ցունամիների, հրդեհների…
տեսքով:

Մենք հակադարձեցինք Աստծո զայրույթը՝
Նրա ուղղությամբ հրթիռներ ուղարկելով,
Աստված տարուբերեց գլուխը
Եվ փակեց բոլոր զգայարանները…

-Տեսնես որքա՞ն կտևի Աստծո զայրույթը…
-Աստծո սիրտ է,-ասում էր մայրս.
10… 9… 8… 7… 6…

***

Ձեփյուռն է այս կողմերն ինձ բերել
(Հարցրու զեփյուռին՝ նա կասի…),
Ես գիտեմ
Այստեղի լեզուն է հավքերեն,
Ջուրը՝ պաղ, և օդն է անբասիր:

Խոնջացած լուսինն է երբ իջնում,
Երբ այգը բացում է աչքը թաց,
Շշուկով
Լույսերի ծվեններն են խոսում,
Ու սերերն՝ ամենուր թաքնված:

Սիրում եմ այդ պահի տևելը
(Չգիտեմ՝ որքա՛ն եմ արժանի…),
Բայց երբ լույսն է փռում
Կարապի թևերը,
Իմ սիրտը երգում է այդ ժամին…

***

Ես ճանապարհ ընկա,
Երբ դեռ մութ էր,
Վերցրի մորս աղոթքը լույս,
Հորս գոտին բառե՝ պինդ ու ծանր,
Օրհնանք էր ինձ համար
Եվ ուղեցույց:

Էլի մութ է,
Ու ես գնում եմ դեռ,
Խփվող դրոշներ են ոտքերս հողին,
Ամեն մի օր, ասես,
Մի նվաճված բևեռ,
Որտեղ, սակայն, խիղճն է ապրում…
Գաղտագողի:

***

Ես տեսա սերմերը պատերազմի,
Ես տեսա՝
Ինչպես են թաղում դրանք
հողի մեջ,
Ինչպես են ծիլ տալիս,
Եվ ինչպես են ինքնամոռաց
խնամում,
Որ պտուղ տա,
Եվ պտուղը պայթի՝ քո հողին
ընկնելով:
Քո՛ հողին ընկնելով…

Ես տեսա՝ ինչպես են
ծափահարում հոգեխախտին,
Ով պատերազմի սերմերը պահել էր
Քրտնած ու դողդոջ ձեռքերում
Եվ խաղաղություն էր ոռնում
Թույլ ու անվարժ ականջների
համար:
Տեսա պարտությունը՝ դրված
հաղթանակի մատուցարանին:
Ես տեսա նույն հոգեխախտին,
Ով պարտության ծաղիկներից
սերմեր էր հավաքում
Մնացած հայրենիքի համար:
Եվ դիտողներին տեսա,
Խումհար աչքերով և խումհար մտքով դիտողներին՝
Նույնքան հոգեխախտ:

***

Կախարդական քարեր են լուռ
խաչերը այս,
Դողդողում են շուրթերդ, երբ
համբուրում ես,
Ասեղնագործ հագուստները դառնում երազ,
Պոկ չեն գալիս քո աչքերից,
Չեն լքում քեզ:

Ու երբ տարտամ հեռանում ես դու խաչերից՝
Նրանց հյուսկեն խորհուրդը
քո սրտում պահած,
Հոգուդ խորքում բորբոքվում են
մի պահ նորից
Կարեկցանքի մոխիրները՝
Վաղուց հանգած:

Սովորական այս քարերը,
Բայց՝ խաչազարդ,
Օծված քաղցր լուսաբացի
հոգու երգով,
Ո՞ւր են տանում քո երազը այսպես հանդարտ,
Քեզ բարուրած ո՞ւր է տանում
երազը քո:

ԱՐԱՐԱՏԻՆ

1.

Ես մի երկինք տեսա. որոտ ուներ խորքում,
Օրոր ուներ խորքում ու մի չքնաղ կտավ,
Ու առկայծող լույսի
միջանցքներում տխուր
Լսեցի երգն հոգու՝ աչքս կպավ:

Աչքս կպավ, ու մի բա՜ղձր երազ տեսա.
Մի ձի արշավում էր՝ երկու լեռ կար թամբին,
Չին ծովից էր ելել, մյուս ծովն էր գնում,
Հսկայական մի ձի բաշն էր քսում ամպին:

Բայց թիկունքից ձիու մի ագռավ դուրս սահեց,
Կռռում էր ու կռռում՝ կտուցն արյան ծարավ,
Չին իր պայտը դաջեց նրա
կեղտոտ գանգին,
Ու ագռավի լեշը քամին տարավ:

Ոտնաձայնը ձիու, կրակահերթ ասես,
(Քնած էի, սակայն ժամանակն էր արթուն),
Ու երազիս կեսին հանկարծ աչքս բացվեց,
Լեռը հավերժ մնաց իմ աչքերի խորքում:

20. 09. 2025 թ.

2.

Հայացքով Արարատին փարված
Իմ հայրենի՛ք,
Քո գովքն անելով աչքս կպավ,
Չնկատեցի,
Թե որդն ինչպես հայտնվեց
քո ներսում,
Ինչպես աննկատ ծվադրեց,
Եվ ինչպես սկսեցին քեզ հոշոտել ներսից,
Իմ քա՛ղցր հայրենիք:

Հիմա սարսափելի քամիներ են՝
Սանձերն արձակած վտանգավոր քամիներ,
Երկինքը պղտոր է ու մոլեգին,
Եվ հիմա վախենում եմ
քեզ համար,
Հայրենի՛ք՝
Թիկունքով Արարատին նայող:

05.10.2025թ.

3.

Երբ, ես փոքր էի,
Արարատը անհաս էր և շուրթերին էր պոետի:

Հիմա, երբ փոքրերը
Տարիքս շփոթում են
Արարատի տարիքի հետ,
Լեռը անընդհատ մեծանում է,
Թեև ես չեմ մոտենում նրան:
Ես չեմ կարողանում
մոտենալ նրան
Այդպես էլ…

07.10.2025.թ.

4.

Երբ ջրերը հոսել էին մինչև վերջ,
Երբ աշխարհով մեկ փոշու շիթեր էին
Ու էլ մարդը չէր կարող տեսնել
մերձավորին-
Երկինքն իր հայացքը դարձրեց ներքև,
Տեսավ ցամաքած ու կնճռոտ
մարմինը երկրի,
Տեսավ ավերակները հոգիներից հեռացած
մարդկանց,
Տխրեց անսահման
Եվ սկսեց արտասվել
ինքնամոռաց,
Եվ արցունքները թափվեցին
ամիսներ շարունակ,
Եվ ջրերը դարձյալ բարձրացան,
Եվ փոքրիկ տապաններն հույսերի
Փորձեցին գտնել հանգրվանը միակ:

Բայց չկարողացան,
Քանի որ լեռանն արդեն վաղուց
ուրացել էին…

11.11.2025թ.

***

Մի Բառ ունեինք, մի թանկ Բառ,
Որ տեղավորել էինք քարտեզի վրա՝
Փշալարերի արանքում,
Եվ հավատով գուրգուրում էինք նրան…
Փշալարերը կարճ էին.
Եվ նրանցով եզրագծված տարածությունը
Փոքր էր ստացվել,
Եվ մենք համաձայն էինք…

Հետո ավելի սեղմեցին փշալարերը,
Եվ Բառից սկսեց արյուն կաթել,
Բառից սկսեց արյուն հորդել,
Իսկ մենք դեռ համաձայն էինք…

Հետո մեզանից փորձեցին խլել Բառը,
Ընդհանրապես մոռացնել նրա մասին-
Մենք դարձյալ համաձայնեցինք…

Եվ մի օր էլ (շատ հետո),
Երբ ուզեցինք կարոտով շոյել Բառը,
Նրա ուսերին թևեր աճեցին
Եվ Բառը թռա՛վ-հեռացավ մեզանից…

***

Բարձրացել Հայրենիքի տանիքը՝
Պահմտոցի էինք խաղում…

Մի օր էլ սայթաքեցինք, գլորվեցինք ցած:

Բարձր էր տանիքն Հայրենիքի-
Մենք դեռ գլորվում ենք…

***

Չափակարկինը պետք է բացեի,
Իսկ ես բացել եմ քարտեզը եղած,
Որ կարողանամ
Շոշափել սերը իմ հայրենիքի:

Պետք է պարզեի
Ձեռքերս՝ ինչպես չափակարկինը,
Ու վազեի ես՝
Սահմանազանցս,
Կորած աչքերի կորսված սիրո
Իմ քարտեզներով…

***

Մենք դնդնում էինք շարունակ
Քո ականջների մեջ,
Եվ դու քնեցիր, Խաղաղությո՜ւն:

Մենք քո կարոտից սթափված
Սկսեցինք բղավել, գոռգոռալ,
Բայց դու չարթնացար:

Դու անհաղորդ մնացիր:
Մնացիր հեռու ու դառնորեն սիրելի՝
Հանգչելով
Մեր օրորոցայիններով զարդարված
Մահիճի մեջ…

ԱՆԴՐԱՆԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



«Արմավ» հրատարակչությունը լույս է ընծայել բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանի «Հետհաշվարկ» ժողովածուն:

Գրքում տեղ են գտել հեղինակի՝ վերջին տարիներին գրած բանաստեղծությունները, որոնց մեջ նա ոչ միայն անդրադառնում է մեր օրերի իրողություններին, այլեւ մարդկային կյանքի փիլիսոփայական հատույթներն է բանաձեւում՝ ապավինելով սիրո, հայրենիքի եւ հավատի գործոններին: Բանաստեղծությունն այն միակ հեներանն է, որ կարող է փրկել մերօրյա խառնակ ժամանակներում մոլորված մարդուն:



Բանաստեղծ,
ՀԳՄ անդամ 1996թ.

Ծնվել է 1963թ., մայիսի 11-ին, Շիրակի մարզի Հացիկ գյուղում:

1980թ. ավարտել է Հացիկի միջնակարգ դպրոցը:

1984թ. ավարտել է Լենինականի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզ-մաթ ֆակուլտետը:

1996-ից աշխատում է որպես ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ:

Նրա բանաստեղծությունները տպագրվել են հայաստանյան գրական մամուլում:

Հրատարակվել է բանաստեղծական ութ ժողովածու:

Թարգմանվել է Գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, սերբերեն, ռուսերեն, լեհերեն լեզուներով:

ԵՐԿԵՐ

1. «Անհնազանդ իքսեր», 1993
2. «Անհետացող ճամփաբաժան», 1996
3. «Երրորդ նժար», 2001
4. «Ձրերից հեռու», 2004
5. «Եվ տիրաբար, և հանցավոր», 2008
6. «Գլուխկոտրուկներ կամ խոսում են թվերը», 2009
7. «ВДАЛИ ОТ ВОД», 2010
8. «Այստեղ երկրից հեռու», 2015թ.
9. «Խաղաղության գույնը», 2023թ.

ՍԱՌԱՆ

Սառան՝ կինս էր առաջին.....

Վարսերը ծովափրփուր, աչքերը մեղեսիկե, ձայնն՝ անուշահունչ: Ասես պարգև երկնային, որին և հավատում էի, և չէի հավատում: Զարմանում էի աստծո շռայլությունից, և սրտի խորքում՝ մերթ տագնապում: Իսկ նա ապրում էր ապրելու համար. հոգին՝անտագնապ, սիրտը՝ սիրով լի, բառերն անկանխատեսելի: Ժամերով լռել գիտեր, թափառել իր խորքերում, հետո ոսկեհատիկ պեղածի հանգույն բարբառում էր քաղցրածոր, քսմսվում տիրասեր շան նման, կկոցում լայնալիճ աչքերը և սիրականչ հայացքը կախում շուրթերից՝ ակամայից խաղալով մազափնջի հետ: Իսկ երբ ձեռքը բռնած ննջարան էի տանում, հլու էր հարճի նման, մաքուր՝ հրեշտակի պես... Եվ բաց գիրք էր, և խրթին՝ բավիղի նման, երբ չէր խոսում, ինքն իր հետ, իր հոգու տիեզերքում: Սիրում էր, երբ կարդում էի մարմինը, խաղացնում ամեն բջիջ, նյարդաթելերը պարացնում խամաճիկի պես, խոնարհ էր նման պահերի ու հնազանդ, երբեմն վագրի նման ճկուն ու խաղացկոտ: Պաշտում էի նրան: Մեր ամուսնության առաջին տարին էր, և ես, ողջ երկրագունդը մոռացած, ապրում էի լոկ իրենով: Ընկերներս արդեն հաշտվել էին իմ բացակայության հետ, հարազատներս ներողամտորեն չէին խանգարում, մայրս աղոթում էր մեզ համար...: Իսկ մենք շարունակ վայելում էինք իրար, տոչորվածի նման, խելահեղ ու հանդարտ, մինչ մրուր և փրփուրներից վեր, հանց ծովն են վայելում, գլանակն ու սուրճը...

Արձակուրդն անցավ հեռավոր կղզում, օվկիանոսի ափին, ուր թոքերդ ուռչում են օդի խոնավությունից, ռունգերդ չորանում տապից, կիսավայրի բնությունն ու քաղաքակրթությունն իրար հյուսված՝ առեղծվածներ են բացում, արմավներ ու բանանաթփեր, ավազե կայսրություն, ուր ոչ ջրի սահմանն է երևում, ոչ ավազի...

Եվ միևնույն վայրում՝ տարիներ անց...

... Բաց մանուշակագույն երկնքի երկար պաստառի վրա ճերմակը գեթ թեթև նշույլներ էր, աղոտ, բզկտված բամբակի նման ու անոսր, ծովը գրկել էր այդ գույներն ու ընկղմվել նրա մեջ: Տարածությունն անսահման էր, ցանկությունները՝ հպանցիկ, թեև անվերջ էր թվում և այդ անվերջության մեջ՝ խաբուսիկ: Լռելյայն մտորելու ժամ էր, անհաղորդ հոգիների տարաբնակեցման, հեռացումների վավերագրման ժամ: Աշխարհը՝ թղթե խաղալիք, թղթերն՝ անվերջանալի սավան, ուր մարմնի դրոշմից զատ ունայնության գաղափարն էր տոչորվում: Շուրթերը ձեռքերի ընկերներն էին, որ պատմություն էին վավերագրում համբույրի կնիքով: Սատանան այդտեղ չկար, բախտի անկառավար անիվն էր, որ գայթում ու գայթում էր անխութ ճանապարհին՝ կանացի հեկեկոցը տխուր օրորոցայինի տեղ առած: Միգամած օրերը թեթև պոռթկման նման սահում էին ու սահում: Եվ թեպետ մերթ-մերթ ալիքներն էին ժայթքում, հնամաշ արևը նորովի էր լիզում սիրո ափունքը, փաղաքշում օրերի ստինքն ու պորտատակը: Բախտը նախճիր էր նյութում և հնոցու մեջ եռ եկած երկաթի նման համառորեն զոհեր տենչում: Երանավետ խաղաղությունը վաղուց էր լքել սիրո ափերը: Հանդգնությունն էր խոսում, կիրքը բոցկլտում էր, և նրա փեշերից օտարոտի լավան իր ուղիներում խժռում էր ամեն ինչ: Ազնվությունը պատրանք էր թվում, համեստությունը՝ կեղծ շղարշ:

Ոտաբոբիկ օրեր էր տենչում, անխարիսխ նավակների փոխարեն՝ խաղաղ կացարան, հեռաբնակ ու ամայի, հայացքներից հեռու, մենավորիկ... Գիտեր. այլևս գոց են դրախտի դռները, մահարձաններն անգամ պահապան շների նման հսկում էին ելքերն ու մուտքերը: Ինքն օտար էր այնտեղ, անկոչ, թափառական մի շուն, որին վաղուց պնակալեզի պիտակ էր տրված... Սեփական մտքերի դաժանությունից ծամածռվող դեմքի վրա ենթադրյալ քամահրանք կար, որն առաջինը վանեց: Սառն ու անտաբեր մեկնվել էր իր կողքին կնոջական տխուր քմայքներով՝ վանելով համերաշխության վերջին ճիգերը: Փորձեց առաջինը ձեռք մեկնել՝ ապարդյուն. խարդավանքի ցանցն այնպես խիտ էր հյուսված և անքակտելի, որ ապարդյուն էր ամեն մի ջանք: Ողջը ենթադրում էր հեռացում: Կինն իր մեջ կողպել էր ապրելու բոլոր կռվանները, կռահելու և ձգտումների խաղաքարտերը, նպատակին հասնելու գաղտնի ուղիները:

Գլխիվայր շրջված սափորի նման ծլլացող վերջին հյութերն էր շաղում: Աչքերի հակինթը չարագուշակ գիշերվա պես մթնում էր հաճախ: Հաղորդության ոչ մի եզր չուներ: Դռնփակ ամրոցի նման ավեր էր թվում ու արխակիկ: Որքան էլ գլուխ էր կոտրում՝ չէր ըմբռնում՝ այդպիսի՞ն էր, թե՞ դարձավ: Ով գլխիվայր շրջեց ամեն ինչ: Կաթնագույն սաթ էր մարմինը, դեղձի բույր ուներ, սակայն հեռավոր էր, ինչպես երբեք: Թովչանքը կախարդմունքի պես էր, և առաջվա պես սիրտը չէր խլրտում, միայն կիրքն էր պատեպատ զարկվում հուժկու ալիքի պես ու ցնորված փլվում ստորոտներին:

Ծանր ու մեծ գիշերն իր ահարկու թևերը հավաքեց քաղաքի վրայից՝ հետզհետե բացելով առավոտի ստինքները: Մեծ, լուսակախ նրանք ճոճվում էին ճերմակ ամպերի տեսքով՝ կաթնածոր նեկտար մաղելով կանաչ հովիտներին ու թաքնախիտ անտառին: Վարագույրի հետ խաղացող արևի ջերմությունն էր անկողնում, թե մի ուրիշ տաքուկ բան, որի պատճառով երկարեցին ձեռքերը: Դատարկ սավանը դեռ ջերմություն ուներ: Նայեց դիմացի պատին, ուր կախված հայելին անդրադարձնում էր լողասենյակի կիսաբաց դուռը: Ջրի ճլմփոցից ու օճառաբույրերից ողողված սենյակում ծանոթ ներկայություն զգաց: Ահա կգա՝ երկար, բաց դարչինե գանգուրները ցամքոցի մեջ հավաքած, դեմքին ու պարանոցին ջրի կաթիլներ, որոնք այնքան էր սիրում... Մի պահ կանգ կառնի հայելու առջև, հետո ուսերից կսահի խալաթը: Ոչ, ոչինչ այլևս չի լինի առաջվանը: Ինքը կգնա բաց պատշգամբ՝ սուրճի ու գլանակի համար, խուսափելով տեսնել կնոջ մերկությունը, որ դիմացինին հունից հանելու առաքելություն ունի, քան սիրո վայելքի: Արդեն չորրորդ օրն է ամեն ինչ կրկնվում է վատ սցենարի պես ու ինքն այլևս չի գայթակղվի: Ինչ իմաստ ունի, եթե կինն արդեն գնել է ետդարձի ուղետոմսը: Չէ, այս անգամ արդեն զայրույթը պոռթկաց երակներում, և ինքն էլ չհասկացավ ինչպես գարեջրի կիսադատարկ շիշը շառաչով մխրճվեց հայելու արտատկերում՝ զրնգացող ապակու փշրանքները սփռելով շուրջբոլորը: Կինը մերկ դուրս թռավ լոգասենյակից, մի պահ վարանեց, հետո տեսնելով ամուսնու այլայլված դեմքը՝ շտապեց հարևան սենյակ, ճանապարհին հագնելով խալաթի կախ թևքերը: Անսպասելի արարքից տղամարդն էլ էր ցնցված, ինքն իրեն չէր ճանաչում, երկար պառկեց անշարժ, մինչդեռ կինը սենյակում հապճեպ իրերն էր կարգավորում: Թող գնա՝ մտածում էր, իր որոշումն է, թող այդպես լինի: Հիմա այլևս չարժե մեղավորներ փնտրել, առավել ևս այս դառն օրերից հետո, երբ իր մեջ անդառնալիորեն ինչ-որ բան կոտրվեց: Ու տագնապներին հաջորդեց ազատության ձգտումը: Ասես թևերից մի ծանր բեռ ընկավ, ու թվաց՝ սավառնում է բաց, ազատ տարածության մեջ, և այդպես թեթևացած էլ չհասկացավ, երբ ննջեց:

Մարինե
ՄԿՐՏՉՅԱՆ

ՍՅՈՒԺԱՆԻՄ ԳԱԼՍՏՅԱՆ

ԽԵԼԱՌ ՀԱՄՈՆ

Քաշ ե՛, ախպե՛ր, քաշե՛
ու լի՛ց մոխրամանը,
Ես էլ էդ քու ցավդ քաշեմ,
Քաշե՛, ախպե՛ր, ու մի՛ քաշվի,
Պատմե՛ տեսնիմ՝ ցավդ ո՞րն է:
Ա՛յ տեսնի՞սկը զիբլի վեդռոն,
Մեջը նստած խելառ Համոն,
Գիտե՞ս՝ ընչի շիշ քիավաքե,
Որդև ինքն էլ քու պես տկար
Կյանքը թողած՝ սերը գուլար,
Ինքն էլ ըդպես անկապ նստած,
Չեռը ջերը սոված մնաց:

Լևոն Բեժ

Խելառ Համոյին քաղաքում գիտեն բոլորը. ամբողջ օրը շիշ է հավաքում, աղբամաններում ինչ-որ բան է փնտրում ու չի գտնում, անցնող-դարձողի հետ խոսում, ինքն իր հետ կռիվ տալիս: Այսպես արդեն երկար ու ձիգ տարիներ: Բայց ո՞վ էր Համոն, ինչո՞ւ էին նրան խելառ կոչում ու ի՞նչ պատճառով էր այդ վիճակում:

1980-ականներին Համոն մի խենթ երիտասարդ էր, ապագա ինժեներ: Միջին հասակի, սոլիդար կեցվածքով ու դասական հագուստով պարզ ու մաքուր լենինականցի էր Համոն: Նրա նպատակները շատ էին, ու նույնքան շատ էր և այդ նպատակներին հասնելու նրա կամքը: Համոն ուներ ապագայի կայուն պլաններ. կավարտեր համալսարանը ու միանգամից աշխատանքի կանցներ Լենինականի գործարաններից մեկում (ամենից շատ ուզում էր աշխատել տիկնիկների գործարանում):

Բայց նրա ապագայի լուսավոր կետը Աննան էր՝ սիրելին: Աննան դեռ դպրոցական էր, բայց Աննայի ու Համոյի սերը շատ սերերից էլ հասուն էր: Աննան անմնացորդ սիրում էր Համոյին, հավատում էր նրան ու հստակ որոշել էր, որ կյանքի մնացյալ տարիները հենց Համոյի հետ էր կիսելու:

Մեկ տարի անց Համոն արդեն ինժեներ էր ու կարողացել էր աշխատանքի անցնել հենց տիկնիկների գործարանում: Աննան շուտով ավարտում էր դպրոցը և որոշել էր դառնալ ուսուցչուհի:

Ամեն անգամ ժամադրության գնալիս Համոն գործարանից տիկնիկ էր բերում Աննային, իսկ Աննան, ճիշտ է, ուրախանում էր, բայց հանդիմանում էր Համոյին.

-Ախր Համո, ամեն անգամ կբերես, ես ըսքանը ի՞նչ էնեմ:

-Աննա, հա՛, ամեն անգամ կբերեմ ու կշարունակեմ բերել: Եթե ուշադիր ես, ուրեմն կտեսնիս, որ հեչ մի տիկնիկ էլ նույնը չէ, տարբեր են:

-Հա՛, ճիշտ ես, տարբեր են, բայց 1, 2, 5,10, ինչքա՞ն կարելի է:

-Աննա, էլի կբերեմ, էնքան կբերեմ, որ էլ տունը տեղ չեղնի դնելու: Ու հարցրա՝ ընչի՞:

-Ընչի՞:

- Որ ապագայում աղջիկս լենականցու պես ըսե՝ պապաս մեր տունը տիկնիկի գործարանի մասնաճյուղ է բացել:

Համոն լենինականցիներին բնորոշ սուր հումոր ուներ ու միշտ ինքնասածի էր: Բայց որքան կայուն էր արտաքնապես, նույնքան և փխրուն էր ներսից:

Ձմեռը եկավ, 1988-ի ձմեռը... թեև դեռ նոր էր սկսվել դեկտեմբերը, բայց Լենինականի խստաշունչ ձմեռը հոկտեմբերի վերջերից էր իրեն դրսևորում: Գործարանում շատ գործ էր կուտակվել, Համոն չէր հասցնում: Աննային զգուշացրել էր, որ առավոտյան չի կարողանա գալ ու միայն երեկոյան կտեսնվեն:

Դեկտեմբերի 7-ն էր... մի տեսակ մոխրագույն, սառը, կարծես օդում կախված ինչ-որ բան էր նկատվում: Համոն դուրս եկավ տանից, տարօրինակ զգացողություն ուներ: Սովորության համաձայն՝ կոստյումով էր, ձախ գրպանում միշտ թաշկինակ կար: Քայլում էր Համոն, հաշվարկում էր աշխատանքի ծավալներն ու մտովի պլանավորում երեկոն՝ չհամբերելով, թե երբ է տեսնելու Աննային: Նայեց ձախ ձեռքին կապած ժամացույցին. վաղամեռիկ հոր նվերն էր: Ժամացույցը 11:40 էր հուշում, այսինքն՝ ուշացել էր: Բայց արդեն գործարանի մոտ էր, չէր հասցրել մտնել ներս, նորից աչքը գցեց ժամացույցին՝11:41: Ու պայթե՜ց, պայթե՜ց, Լենինականը պայթեց...Համոյի աչքի առաջ ընդամենը մի քանի ակնթարթում գործարանը հողին հավասարվեց, իսկ ինքը չէր հասկանում՝ ինչ էր կատարվում: Սկսեց վազել այսուայն կողմ: Փոշու մեծ ամպ էր կախվում քաղաքի գլխին՝ կարծես դամոկլյան սուր, որ գուժում էր վերահաս աղետը: Կատարյալ քաոս էր, իսկ Համոն՝ քաոսի մեջտեղով քայլող հավասարակշռություն. ամեն կողմում փլատակ էր, փլատակի տակ՝ դիակ, դիակի տակ՝ ցավ: Համոն անընդհատ տրորում էր աչքերը ու չէր հասկանում՝ դա անում էր փոշուց, թե սթափվելու անհրաժեշտությունից: Համոյին թվաց, թե սա իր հերթական երազներից էր. «Համո՛, դե ելի էլի, հերիք է, զարթնի՛, Համո՛»: Այսպես ձայն էր տալիս Համոն ու հարվածում ինքն իրեն, որ կարողանա դուրս գալ գիշերային այդ մղձավանջից: Բայց մղձավանջը հենց այն դառը իրականությունն էր, որին բախվել էին քաղաքում բացառապես բոլորը:

Քաղաքի բոլոր ճանապարհները Համոյի համար միայն մի տեղ էին տանում: Մի քանի րոպե ևս, և Համոն Աննայի դպրոցի դիմաց էր: Փրկարարներ ու մարդիկ էին հավաքված, բոլորը խոսում էին, որ երեխաներից ոչ մեկը չի փրկվել, Աստված չէր խնայել:

Դիակները դուրս էին բերում փլատակների տակից: Համոն մոտեցավ դիակներից մեկին. Աննան էր, Համոյի Աննան... նա ճանաչեց Աննային, բայց ոչինչ չասաց, նույնիսկ աչքերը չարցունքոտվեցին: Մի քանի րոպե անց Համոն սկսեց խելագարի պես ծիծաղել, ուղղակի ծիծաղում էր՝ առանց որևէ բան ասելու:

Ինչ էր զգում Համոն՝ դժվար էր ասելն ու նույնիսկ պատկերացնելը: Բայց մի բան հստակ էր. ինչպես որ աղետը ավերակների վերածեց քաղաքը, նույնպես և կորուստը ավերակների վերածեց Համոյի հոգին:

Անցան շա՜տ տարիներ, Համոն դարձավ խելառ Համո: Խելառ Համոյի անձի նկարագիրը իրական Համոյից անխոս շատ էր տարբերվում: Տունը, աշխատանքն ու սիրելիին կորցրած Համոն թեպետ նույնը լինել չէր էլ կարող: Համոն կորցրեց ամեն ինչ ու չգտավ իրեն: Համոն կորցրեց աշխատանքն ու չգտավ նորը: Համոն կորցրեց իր Աննային ու չփնտրեց մի ուրիշ Աննայի:

Շատ տարիներ անց աղետից ոտքի կանգնող ու սպիացող վերքերով Գյումրու փողոցներում կարելի է տեսնել աղետից ծնկած ու չսպիացող վերքերով խելառ Համոյին: Թափառում է մի փողոցից մյուսը ճիշտ այնպես, ինչպես թափառում էր հենց այն օրը: Չնայած ամեն ինչին՝ սովորության համաձայն նա կրկին սև կոստյումով է, ձախ գրպանում՝ թաշկինակ: Նախկին ինժեների կեցվածքը կար, բայց չկային էլ ո՛չ գործարանը, ո՛չ ինժեները: Խելառ Համոն իր սերն էր սգում ու ողջ կյանքում էլ սգաց: Նա խոսում էր անցնող-դարձողի հետ, խրատներ տալիս ջահելներին, հումորը խնամքով պահած՝ կատակում էր ահելների հետ: Իսկ առավոտյան Համոն միշտ շտապում էր, ու այն հարցին, թե ուր է շտապում ամեն առավոտ, խելառ Համոն վստահ շեշտով պատասխանում էր՝ գործի: Ամեն առավոտ՝ 11:41 Համոն տիկնիկների նախկին գործարանի տեղում է, անշարժ կանգնած, գուցե մտովի փորձում է անցյալի փլատակները վեր հանել ու գտնել դեռ չկառուցված ապագան: Իսկ Լենինականում 1988-ի աղետից հետո խելառ համոները շատ են...

Քաշե՛, ախպե՛ր, քաշե՛
ու լի՛ց մոխրամանը,
Ես էլ էդ քու ցավդ քաշեմ,
Քաշե՛, ախպե՛ր, ու մի՛ քաշվի,
Պատմե՛ տեսնիմ՝ ցավդ ո՞րն է:
Ցավդ սե՞րն է,
Մարդու դարդը տունն
ու տեղն է,
Կտորըմ հաց, կումըմ ջուրն է,
Իսկ դու նստած սերդ գուլաս...

ԻՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆԸ.

«Մարդը սպիտակ քաղաքից» գիրքը հրատարակվել է Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ, Հայաստանի կինոյի հիմնադրամի հետ համագործակցությամբ:

Չոն Հարություն Խաչատրյանի ֆիլմերին

Դիտելով Հարություն Խաչատրյանի ֆիլմերը՝ սկսում եք ճանապարհորդությունը կինոյի ընդհանուր սպասելիքներից անդին: Չգիտակցելով դա՝ դիտողը ներքաշվում է մի փորձառության մեջ, որն անընդհատ զարմացնում է: Հարություն Խաչատրյանի ֆիլմերը լավագույն էքսպերիմենտալ կինոնկարներից են: Նա ձեզ ոչ թե պատմություն է պատմում, այլ իրական ժամանակի տաճարում հաղորդում է տեղի և անձի անխափան մքնոլորտ՝ մի ձև, որը ժամանակը դարձնում է անժամանակ: Այն, ինչ նա առաջարկում է, անխոս պատմույթ է մի պատմության մեջ, որը պետք է տեսնել:

Ձեր առջև եղած պատկերները միաժամանակ տեսողականի եւ լսողականի միաձուլումն են: Երկուսն էլ ձեր ուշադրությունն են գրավում: Երաժշտությունը հուզական պատմույթ է՝ առանց փոխաբերության, հոգուն ուղղակիորեն փոխանցվող: Այն, ինչ լսում եք, այն է, ինչ տեսնում եք և այն, ինչ տեսնում եք, այն է, ինչ լսում եք: Զարմանալի է:

Իր անվանի մեծերի՝ կերպարի հրեշտակապետ Սերգեյ Փարաջանովի և Արտավազդ Փելեշյանի հետքերով՝ Հարություն Խաչատրյանն իր ստեղծագործությունները միացնում է նրանց ստեղծագործություններին հոգու պոեզիայում: Իրական ժամանակի հավերժության մեջ նրա ֆիլմերը բացահայտում են կյանքի և հողի ընդհանուր հարմարավետությունը, քաջությունն ու փխրությունը: Թեման Հայաստանն է՝ ձյունը, տարվա եղանակները, լեզուն, անհետացման պահը, որը միշտ շրջադարձային է: Նրա կերպարները վառ ծաղիկների պես սերում են Հայաստանի հողից՝ հումորով ջրված եւ կյանքի տապը մեղմացնող ծաղիկներ: Նրա դռներով շրջում են անուշաբույր, ծաղկած կերպարներ: Նրանց անխոս պատմություններն ավելի շատ ասելիք ունեն, քան հնարավոր է պատմել: Բացատրությունից դուրս ներքին ազդեցությունն ինքնին «բացատրություն» է: Հանդիսատեսին վստահված նրա ֆիլմերը ինքնաուսուցողական են: Նրանք խոսում են մեր բոլորի ներսում բնակվող էսթետիկ եռյակների հետ՝ զգացմունքների, հույզերի և ընկալման:

«Սահմանը» դիտելիս մի բան տեղի ունեցավ, որն ինձ ապշեցրեց եւ իրապես զարմացրեց. ես ամբողջովին ներքաշվեցի ջրային գոմեշի կյանքի եւ զգացմունքների մեջ: Եղջերավոր անասունի պատկերների միջոցով ստեղծված լարվածությունն ինձ հետ շատ երկար կմնա՝ ջրանիշի պես: Գեղեցիկ արարածի նկատմամբ ուշադրությունը նման էր կինոաստղին հատկացրած ուշադրությանը: Այս անսպասելի խորությանը կարող է ուշադրություն դարձնել «Դիսնեյ» ստուդիան: Հարությունը հասել է նրան, ինչին չի կարող հասնել անիմացիոն մարդակերպված ֆանտազիան՝ իրականի ֆանտազիային, շնորհքի իսկական հրեշի: «Պոետի վերադարձը» ֆիլմի վերջում, որն ինքնին սկիզբ էր, ես՝ անծանոթս, ևս կարող էի լսել. «Մայրը՝ այնքան հոգնած և ծեր, երգ էր երգում յուրաքանչյուր անծանոթի համար, ով գալիս էր»: Ես ինքս նստեցի բեռնատարը, կերա ուտելիքը, խմեցի քաղցր ծիրանը, լսեցի երաժշտությունը ողջ գիշեր պարելիս: Ես իրոք այնտեղ էի: Տուն հասնելուն պես՝ ձյան մեջ, իսկապես քարի մեջ պարփակված պոետը խոսեց ինձ հետ: Ինչպես պոետի արձանը, այնպես էլ ես ժամանակի մեջ եմ քանդակվել:

Հարությունի ֆիլմերը տարօրինակ են: Նրա հակասական, հուզիչ կադրերը ստեղծում են մի փորձառություն, որտեղ իմաստը ձևի մեջ է: Երկար ձգվող կադրերը փոխադարձ հայացք են ենթադրում, որը դիտողին ներս է հրավիրում: Ինչպես և կյանքում՝ ճանապարհորդությունը նպատակակետն է: Գիշերային պատկերների նման, որոնք հագնում են ցերեկային լույսը, նրանք բացահայտում են էկրանի մակերեսից այն կողմ գտնվող խորությունը: Նրա ֆիլմերը հանդիսատեսին հրավիրում են լողալու այնքան հեռու, որքան վերջինս կուզենա՝ սովորական կինոյի ափերից դեպի պայծառ անհայտության ջրերը:

Հայաստանի զավակ Հարությունը, ձևին հավատարիմ մնալով, ստեղծել է տեսողական պոեզիա, որը եզակի է կինոաշխարհում՝ իր մեծերի հետ: Շնորհակալ եմ քեզ, Հայաստա՛ն, շնորհակալ եմ, Մա՛յր, որ ծնեցիր այդպիսի ստեղծագործ հոգիներ: Ինչպես գիշերվա աստղերը, այնպես էլ անցյալի նրանց լույսերը մեր ներկայության մեջ են:

ԳՈԴՖՐԻ ՌԵՋԻՈ

ԴԻՆՈ ԲՈՒՑԱՏԻ

ՁՈՐԱԳՈՒՆԴԸ ՄԵԿՆՈՒՄ Է ԱՐԵՎԱԾԱԳԻՆ

Մարսից առաջին անգամ եկած դիվանագետին ներկայացնում էի մեր սովորույթները.

-Կարելի է կարծել, թե մեր ողջ աշխարհը լոկ մեկ նպատակի համար է ստեղծված, որ հավիտենապես այնտեղ ներկա լինի մեկնելու պատրաստ մի կայազոր:

Ուստի մարդիկ վերարտադրվում են, կենդանիները և բույսերը ևս վերարտադրվում են, ու դրան նպաստում է այն հանգամանքը, որ բեղմնավորման իրողությունն ընդհանրապես համարվում է որպես չափազանց մեծ բավականություն պատճառող մի բան:

Ու այնքան քաղցր է սիրով զբաղվելը տղամարդու և կնոջ համար, որ բացարձակապես բացակայում է վտանգը, թե մարդը երբևէ կդադարի բեղմնավորել և ապահովել կայազորի համալրումը:

Ավելին, նա տրվում է մարմնական զուգավորման հաճույքին հիմար անփութությամբ՝ լույս աշխարհ բերելով շատ ավելի զավակների, քան ինքը կարող է կերակրել, ուստի և հաճախ տառապում է թշվառությունից, քաղցից, նվաստացումներից, ու այնքան տխմար է, որ չի նկատում, որ այդ զրկանքներն ինքն է իրեն պատճառում, բայց մեղքը բարդում է մերձավորի վրա, որ մի քիչ ավելի խելք ունենալով՝ նրանից ավելի բարվոք վիճակում է:

-Սակայն, բացատրի՛ր ինձ,-ասում է օտարականը, որը եկել է մեկ այլ, ավելի բանական աշխարհից ու չի կարողանում հասկանալ,- բացի բեղմնավորման ակտից, ի՞նչ բավականություն ես ստանում՝ զավակներ աշխարհ բերելով:

-Կեցցե՛ս, կյանքը սրբազան բան է, ու դրա ջահը ապագային փոխանցելը մեր ամենաազնվաբարո առաքելությունն է: Բացի դրանից, քանի որ ծնվում են մեզանից ու գրեթե միշտ մեզ են նմանվում, մենք նրանց սիրում ենք աշխարհում ամեն բանից ավելի, ու նաև մանուկները սիրունատես են, անուշիկ, սիրո զգացում են արթնացնում:

-Բայց ձեզ հաշիվ տալի՞ս եք, որ նրանց աշխարհ եք բերում մեն-մի նպատակով, որ նրանք ևս մեկնեն:

-Իհարկե, գիտենք դա, բայց նրանք մեկնում են մեզանից շատ ավելի հետո: Այդպիսին է կանոնը: Ճշմարիտ է նաև, որ երբ զավակներից մեկը, դժբախտաբար, մեկնում է երիտասարդ հասակում, ծնողների համար դա ամենամեծ ողբերգությունն է:

-Դե, թեև ես դեռևս շատ կարճ ժամանակ է, ինչ այստեղ եմ, բայց այնպիսի տպավորություն ունեմ, որ ձեր զավակները, որոշ տարիքի հասնելով, ձեր սիրուն պատասխանում են արհամարհանքով ու ատելությամբ, ու բնավ էլ նրանց պետքը չէ, թե դուք՝ տարեցներդ, երբ կմեկնեք, եթե միայն դա չբերի փողի ու հարմարությունների կորստի:

-Մի ժամանակ այդպես չէր:

-Հիմա այդպես է, ըստ իս:

-Այդուհանդերձ, մարդու առաքելությունը կյանքը շարունակելն է, մնացյալ ամեն ինչը երկրորդական նշանակություն ունի:

-Շարունակել կյանքը, բայց նաև՝ մահը, ավելի շուտ՝ մահը, քան կյանքը, քանզի կյանքի վերջնանպատակը մահն է: Ու սերնդեսերունդ այդ շարունակականությունը՝ մեռնելու իրական նպատակով, ինձ թվում է ամենաանհեթեթ բանը:

-Շատ անհեթեթ է արտաքնապես, բայց ակնհայտորեն այնպես չէ, ինչպես դու ես ասում: Կարծում եմ, կյանքն ինքնին, այսինքն՝ մեկնումի սպասումը կարևորագույն ու գեղեցկագույն բան է, եթե ճիշտ է օգտագործվում: Բոլորն, ի դեպ, թվում է, վերին աստիճանի գնահատում են այն: Եվ դրանից հեռանալն ամենամեծ ցավն է, որ կա:

-Եվ սակայն, ի՞նչ կարող ենք անել:

-Շատ հասարակ բան. այլևս չբեղմնավորել, չթողնել, որ վերստեղծվի այդքան թշվառ մի ճակատագիր:

-Դե լա՜վ, ո՞վ է ասել, որ մեկնումից հետո ամեն ինչ վերջանում է: Այստեղ խոսքը ամենամեծ խնդրի մասին է, մի բանի մասին, որը բոլորից ամենակարևորն է ու սոսկալի: Ո՞րն է մեկնող զորախմբերի նպատակակետը: Ո՞ւր են գնում մեկնող նավերը: Դեպի ի՞նչ ճակատամարտեր, ծովեր, ճակատագրեր: Ինչ մարդը գոյություն ունի, բոլոր այդ հանելուկները ծառանում են նրա առաջ: Թշնամական բանա՞կ կա պարտության մատնելու: Անծանոթ երկի՞ր կա նվաճելու: Ո՞ւր են գնում: Ի՞նչ մտադրություններով: Եվ կամ գնում են կուրորե՞ն: Իսկ նավերը որտե՞ղ են կառանում: Սա մեծագույն խնդիր է:

-Որը ոչ ոքի չի հաջողվել լուծել:

-Ճիշտ է: Շատերը համոզված են, որ Երկրի վրա կյանքի նպատակը հենց երկրորդ կյանքն է՝ մի ուրիշ տեղ, որը պիտի տևի հավերժորեն: Տեսնո՞ւմ ես, այս կերպ ամեն ինչ բացատրվում է:

-Իսկ դու ինքդ հավատո՞ւմ ես դրան:

-Դե, անկեղծ ասած՝ ոչ: Ծնողներս հավատում էին: Ես դրան այլևս չեմ հավատում կամ գոնե խիստ կասկածում եմ: Զավակներս դրան էլ ավելի քիչ են հավատում… Բայցևայնպես, նաև զավակներս են կյանքին անվերապահորեն կապված:

-Դե իհարկե: Ի վերջո, դա միակ բանն է, որ նրանց մնում է:

-Տեսնո՞ւմ ես, մարդը մեծ, առեղծվածային պաշարներ ունի…

-Ուզում ես ասել, նա ապրում է, ասես չպիտի՞ մեկնի մի օր: Ասես իր կյանքը հավերժ պիտի տևի՞:

-Որոշակի իմաստով՝ այո՛:

-Պիտի քեզ խոստովանեմ, որ դա այն է, որն ինձ ամենաշատն է ապշեցրել, ինչ գտնվում եմ ձեր մեջ: Բոլորն այնպես են վարվում, կարծես երբևէ չեն մեկնելու, ու երբ գալիս է մեկնելու պահը, զարմանում են, բողոքում, ողբերգություն սարքում:

-Տրամաբանական է: Կյանքը շատ գեղեցիկ բան է, աշխարհը կախարդիչ վայր է. ամենուր մարգագետիններ են, անտառներ, ծաղիկներ: Երկինք, արև, ամպեր: Աստղեր, լուսին: Իսկ ծովը տեսա՞ր, իսկ լեռնե՞րը: Թանգարաններում եղա՞ր: Փորձե՞լ ես կարդալ մեր գրական գլուխգործոցներից մեկը:

-Դե՞հ, քիչ ժամանակ է, ինչ այստեղ եմ: Ձեր լեզուն լավ չգիտեմ:

-Ուրեմն դեռևս չես տեսել ամենաչքնաղ քաղաքները, հուշարձանները, երկնաքերները, կամուրջները, որ մարդու հպարտությունն են: Իսկ երիտասարդ ու գեղեցիկ կանայք դեռ չե՞ն գրավել քեզ: Փորձե՞լ ես դիպչել նրանց: Դու էլ սեռական համակարգ ունես, չէ՞: Փորձե՞լ ես սիրով զբաղվել: Գայթակղվե՞լ ես մեր աշխարհի արատներով: Արդյոք գիտե՞ս, որ ես Աստծո արարած եմ:

-Լսում եմ քեզ՝ մի քիչ տարակուսած:

-Իսկ երաժշտությո՞ւնը, երգե՞րը… իսկ համեղ ուտելիքներն ու խմիչքնե՞րը… գիտե՞ս արդյոք, որ ոմանք առատ սեղանը նախընտրում են մարմնական ցանկությունից… Իսկ թատերական ու սպորտային ներկայացումնե՞րը: Իսկ սպորտի պատճառած խանդավառությո՞ւնը: Դուք ևս դահո՞ւկ եք քշում այնտեղ:

-Պիտի ընդունեմ, որ դու բավականին պերճախոս ես: Քիչ է մնում համոզվեմ:

Մի խոսքով, ի հեճուկս ամեն ինչի, ձեզ մոտ ուղղակի դրախտ է: Չնայած ժամկետի լրանալուն, որ ձեզ սպասում է, դուք երջանիկ էակներ եք թվում:

-Կարող ես այդպես ասել: Երկիր մոլորակը դրախտավայր է՝ հավիտենական գարնան մեջ, և արդեն այն իրողությունը, որ մենք ապրում ենք, չենք կարող այլ բան ցանկանալ, և ինչպես դու ես ասում, մենք ուղղակի երջանիկ էակներ ենք:

-Ուրեմն, ես սխալվել էի:

-Անշո՜ւշտ: Հակառակ այն բանի, ինչ դու ենթադրում էիր, կրկնում եմ, մենք երջանիկ ենք: Երջանի՜կ, երջանի՜կ: Լողում ենք երանության օվկիանոսո՜ւմ:

-Հայ-հո՜ւյ, բախտավոր մեր գլուխ…

Զարչարվել, իսկ վերջում մշտապես մնալ ձեռնունայն: Խենթանալ ինչ-որ կնոջ համար, ու երբ արդեն տիրացել ես նրան, զգալ քեզ դառնորեն խաբված: Կռիվ տալ փառքի, փողի համար, այն դևի, որ քեզ ուղղորդում է, ու երբ թվում է, թե ինչ-որ բանի ես հասել, ահա սև ստվերն է քեզ սպասում, ու այս ամենը՝ միջից ճղվելուցդ հետո, ու նաև հիասքանչ արատները, նաև պոեզիան, նաև երաժշտությունն են դառնում նեխվածություն ու թույն. ու դեռ քեզ հետ խոսում է մի մարդ, որի բախտը բերել է, քանզի մյուսները դատապարտված են նաև հիվանդությունների, թշվառության, մարմնական ախտերի, գարշահոտությունների, տգեղության, գռեհկության, ու նաև նրանք պիտի մեկնեն, անգամ եթե մոռանում են այդ մասին, նաև նրանց է ստվերը սպասում մի անկյունում, դռան հետևում, զգեստապահարանի մեջ, գիշերվա անձկությունը և առավոտվա անձկությունը՝ ևս, որն ավելի վատ է…

Միակ փախուստն այն հիմարությունն է, որով քաղաքական մարդը մտահոգվում է գալիք դարերի ու մարդկության ճակատագրերի մասին, փաստաբանը, բժիշկը, բանկիրը, ջուլհակը, վաճառականը համոզված են, որ իրենց աշխատանքը կամ գործը կամ դավը աշխարհի ամենակարևոր բաներն են, ու տևելու են հավետ, և ամեն մեկը սիրում է ինքն իրեն և պաշտում իրեն պատկանող բաները, իր սեփական տունը, իր երեխաներին ու լրիվ մոռանում է վերջնական նպատակը, որի մասին միտքը մինչդեռ պիտի զբաղեցներ նրան իր բոլոր օրերին, իսկ հետո, երբ գալիս են նրան կանչելու, սկսում է ճղճղալ մորթվող խոզի նման:

Թարգմանությունը՝
ԳԱՌՆԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ

ԳՐՔԱՐՎԵՍՏ ԵՎ ԿԱԼԻԳՐԱՖԻԱ. ԳՐԻ ՈՒ ԳՐՉՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Գյումրու մշակութային կյանքում վերջին հինգ տարիներին հաստատվել է մի կարևոր իրադարձություն, որը միավորում է գրքարվեստը, վայելչագրությունն ու տառարվեստը՝ նոր լույսով ներկայացնելով մեր դարավոր մշակութային ժառանգությունը: Բեռլին ԱՐՏ հոթելում գործող Գալերի 25-ում իրականացվող «Գրքարվեստ և կալիգրաֆիա» նախագիծը դարձել է տարվա ամենասպասված մշակութային նախագծերից մեկը, որտեղ պատմական ավանդույթները հանդիպում են նորարարությանը, իսկ գրի հանդեպ սերը՝ ժամանակակից ստեղծագործական մոտեցումներին:

2025 թվականին իրականացված հոբելյանական՝ հինգերորդ ծրագիրն առանձնացավ իր յուրօրինակ հետահայաց ցուցադրությամբ, որտեղ ներկայացվեցին նախորդ տարիների ստեղծագործությունները: Սակայն մինչև այդ տպավորիչ հանգրվանը, այս նախաձեռնությունն անցել է երկար ու հետաքրքիր ճանապարհ, միավորել տասնյակ արվեստագետների Հայաստանից ու արտերկրից՝ դառնալով հարթակ ստեղծագործելու, սովորելու և փորձի փոխանակման:

Սկիզբը

Թեպետ նախագիծը Գալերի 25-ում պաշտոնապես մեկնարկել է 2021 թվականին, դրա գաղափարը ձևավորվել է շատ ավելի վաղ՝ որպես արձագանք այն մտահոգությանը, որ ձեռագրի մշակույթը և ձեռակերտ գրքարվեստն աստիճանաբար մոռացության են մատնվում: Գաղափարն էր ոչ միայն ցուցադրելու այն արժեքները, որոնք արդեն իսկ կային, այլև դառնալու հարթակ նոր ստեղծագործական մտքերի, կայացած արվեստագետների և նոր սերնդի միջև շփման:

Նախագծի նպատակներն են՝ հայկական գրչության ավանդույթի վերհանում, դրա արդիականացում, զանազան ստեղծագործական փորձառությունների ներկայացում: Գիրքն այստեղ դիտվում է ոչ միայն որպես ընթերցանության նյութ, այլև որպես արվեստի առանձին ինքնարժեք ձև:

Հինգ տարիների ստեղծագործ ուղին

Նախագիծն ավանդաբար մեկնարկում է մեծ անհատական ցուցահանդեսով, որը դառնում է առանցք տվյալ տարվա մշակութային իրադարձությունների: 2021 թվականին՝ նախագծի առաջին տարին մեկնարկեց գերմանացի արվեստագետ Հայնց Ֆերբերտի՝ «Չինական կալիգրաֆիայի ինտերպրետացիաներ» ցուցադրությամբ: Արվեստագետն, ի դեպ, ծրագրից ոգեշնչված, հաջորդ տարի ներկայացավ իր «Հայոց այբուբեն» շարքով: Երկրորդ տարվա միջոցառումների բացումն ազդարարվեց Արարատ Սարգսյանի «Արխետիպեր» շարքի ցուցահանդեսով, որտեղ ներկայացված էին հնագույն գրային նշանները: Նույն տարին արվեստագետը բանաստեղծուհի Ռոզա Հովհաննիսյանի հետ հանդես եկավ ձեռակերտ գրքի վարպետաց դասով, որում ներկայացվեց «Տղա Դավթի և աղջիկ Խանդութի հեքիաթը»՝ պատմությունից մինչև ստեղծում:

2023 թվականի առանցքը «Ուտոպիա և Պարադոքս» խորագրով ցուցադրությունն էր՝ գեղագիր Ռուբեն Մալայանի ստեղծագործություններով և վայելչագրության աշխատարանով, չորրորդ տարվա գլխավոր միջոցառումը «Սաղարթ» բրենդի հիմնադիր Արմենուհի Սաղդասարյանի՝ «Հայրենեաց մետաքսագիր» ցուցադրությունն էր՝ մետաքսի վրա պատկերված տառարվեստի բացառիկ մեկնաբանությամբ: Վերջին՝ հինգերորդ տարին հոբելյանական էր՝ հետահայաց ցուցադրությամբ. բոլոր նախորդ արվեստագետների ստեղծագործությունների համադրությամբ:

Նախագիծը, բացի ցուցահանդեսներից, ներառում է վարպետաց դասեր՝ կալիգրաֆիայի, գրատպության, տառաստեղծության, գրաֆիկ դիզայնի թեմաներով, դասախոսություններ և քննարկումներ՝ հրավիրյալ մասնագետների մասնակցությամբ, աշխատարաններ դպրոցականների և ուսանողների համար, հանդիսավոր փակման համերգներ, որոնց մասնակիցն են դառնում հիմնականում տեղական երաժշտական խմբերը, ինչպես օրինակ՝ «Խազեր» երգչախումբը, «Նռանէ» ֆոլկ-ռոք բենդը և այլն:

Արդեն հինգ տարի շարունակ այս միջոցառումները ձևավորում են նախագծի յուրահատուկ ոճը՝ դարձնելով այն ոչ միայն արվեստի ցուցադրություն, այլև համայնքային, կրթական ու ճանաչողական լայն հարթակ:

Նախագիծը մեծ հաշվով կայացել է համագործակցությունների շնորհիվ: Առաջին չորս ծրագրերի իրագործմանն օժանդակել է ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը»: Նախագծում որպես գործընկեր և մասնակից հանդես են գալիս ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղը, Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքը, Գյումրու հանրակրթական և արվեստի դպրոցները, Գեղագիտության ազգային կենտրոնի Գյումրու և Վանաձորի մասնաճյուղերը, Կրաշեն գյուղի Արտուտիկ կենտրոնը, Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանը, Գյումրու թ.3 արհեստագործական ուսումնարանը, ինչպես նաև բազմաթիվ այլ կրթական ու մշակութային կենտրոններ:

Տարիների ընթացքում նախագծին միացել են տառաստեղծներ Ռուբեն Թարումյանը, Էդիկ Ղաբուզյանը, Մկրտիչ Մաթևոսյանը՝ «Ակտուալ Արտ» հրատարակչության տնօրեն, գրաֆիկ դիզայներ, որը նաև նախագծի լոգոյի և ամբողջական գրային դիզայնի հեղինակն է: Մասնակցել են նաև ճապոնացի նկարիչ Կունիտո Նագաոկան՝ հայկական սեպագիր արձանագրությունների ուսումնասիրման և պահպանման «տակու հոն» մեթոդի ներկայացմամբ, ֆրանսիաբնակ արվեստագետ Վազօն (Վազգեն Պահլավունի-Թադևոսյան)՝ իր «Ասեմիկ գրեր» և արվեստագետի գրքերի մասին դասախոսություններով, արվեստագետ Վահան Թոփչյանը՝ «Ծաղկողների արվեստ» և բացիկների նկարազարդման վարպետաց դասերով, արվեստագետ Սարգիս Հովհաննիսյանը՝ լինոփորագրության աշխատարաններով, նկարիչներ Հրաչյա Վարդանյանը, Կարեն Բարսեղյանը, «Հայ գրի մշակույթ» շարժման հեղինակ Տարոն Սահարյանը, Հովի» Թումանյանի թանգարանի տնօրեն Անի Եղիազարյանը՝ Արտավազդ Թումանյանի վաղ տարիքի գրքերի նկարազարդումների մասին դասախոսություն-աշխատարանով, երիտասարդ արվեստագետներ Անի Առաքելյանը, Օֆելյա Միլիտոսյանը և այլք:

Ամենամյա նախագծի հիմնական օրերից բացի, Գալերի 25-ում տեղի են ունենում նաև գրքարվեստի և կալիգրաֆիայի վերաբերյալ ընթացիկ այլ միջոցառումներ, ինչպես օրինակ՝ Իրանի դեսպանության աջակցությամբ կայացած իրանցի երկու գեղագիրների վարպետաց դասերը, գերմանացի արվեստագետ, խեցեգործ էլկե Բոշկեի վարպետաց դասը և այլն:

Այսօրը

«Գրքարվեստ և կալիգրաֆիա» նախագծի արդիականությունն այսօր առանձնահատուկ կարևոր է: Թվային աշխարհի սրընթաց զարգացման պայմաններում, երբ ձեռագիրը ժամանակ առ ժամանակ զիջում է իր դիրքերը, նման նախաձեռնությունները հիշեցնում են, որ գրի միջոցով արտահայտված միտքը, գեղագիտությունն ու հմտությունը մշակույթի անբաժան մաս են:

Ծրագիրը մի կողմից՝ ապահովում է ժառանգության պահպանումն ու փոխանցումը՝ վերակենդանացնելով ձեռագրի և գրչության հազարամյակների պատմություն ունեցող արվեստը, մյուս կողմից՝ խթանում է ժամանակակից ստեղծագործական մտածողության զարգացումը՝ քաջալերելով նորարար մոտեցումներ տառարվեստի և գրքի ձևավորման մեջ: Բացի այդ, այն կարևոր դեր ունի հանրային կրթության և ներգրավման ոլորտում, քանի որ բազմաթիվ դպրոցականներ ու երիտասարդներ այստեղ ձեռք են բերում հմտություններ, որոնք կարող են որոշիչ լինել նրանց ապագա մասնագիտական կողմնորոշման հարցում:

Հոբելյանական 2025-ը՝ նոր մարտահրավերների ու նպատակների ճանապարհին

Հոբելյանական՝ հինգերորդ տարին ամփոփեց «Գրքարվեստ և կալիգրաֆիա» նախագծի ստեղծագործական ճանապարհը և վերագնահատեց դրա ձեռքբերումները: Հետահայաց ցուցադրությունը, բոլոր մասնակիցների հետ հանդիպումն ու քննարկումները հնարավորություն տվեցին մի պահ դադար տալ և հետ նայել՝ վերաարժևորելով այս տարիների ընթացքում ստեղծածը:

Ապագայի նպատակներն ավելի մեծ են. հնգամյա համահավաք կատալոգի տպագրություն, համագործակցությունների ընդլայնում, առավել լայն միջազգային մասնակցություն, նոր թվային և ժամանակակից տեխնոլոգիաների ներառում, կրթական ծրագրերի ընդլայնում, վայելչագրության նոր, համարձակ բացահայտումներ:

Հարկ է նշել, որ այս տարիների ընթացքում գրքարվեստի և վայելչագրության թեմայով մեծ հավաքածու է ստեղծվել Գալերի 25-ում, որն ապագայում ցուցադրվելու և որպես ուսումնասիրության նյութ հանդես գալու միտում ունի:

«Գրքարվեստ և կալիգրաֆիա» նախագիծն ինքնատիպ մշակութային տոն է, որտեղ գիրը ոչ միայն պատմվում է, այլև ստեղծվում, փոխանցվում և նոր կյանք է ստանում:

Լուսինե ՓԱԽԱՆՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԿԱՄՈՒՐՋ ԵՐԵՎԱՆ-ԳՅՈՒՄՐԻ

Նոյեմբերի 25-ից 27-ը Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի «Թուրք-ադրբեջանական լեզվաքարոզչական խոսույթը» գիտական նախագծի շրջանակում մեկնարկվեց մարզային բանախոսություն-քննարկումների եռօրյա շարքը:

Գյումրու գեղագիտության ազգային կենտրոնում բանախոսեցին ՀՑԹԻ-ի գիտաշխատող, բ.գ.թ., դոցենտ, նախագծի ղեկավար Էլինա Միրզոյանը և ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Թեհմինե Մարտոյանը:

Բանախոսության շրջանակում Միրզոյանը ներկայացրեց թուրք-ադրբեջանական ցեղասպանական խոսույթի թեզեր, հակաթեզեր, արտահայտչաձևեր, որոնց թիրախում են Արցախը և Հայաստանը: Այդ համատեքստում առանձնակի քննարկվեց հայկական տեղանունների ադրբեջանականացման պետական քաղաքականությունը, թեզերի թուրքական ակունքը, դրանց կիրառման ժամանակային ծիրը, դրսևորման նախացեղասպանական պասիվ, ցեղասպանական և հետցեղասպանական ակտիվ ընթացքը: Սահմանվեց «ոճրագործի լեզվի» և դրա ազդեցության վտանգների տիրույթը, քննարկվեցին հետևանքները, ինչպես նաև անդրադարձ արվեց քաղաքագիտական լեզվաբանության թեմատիկ խնդիրներին Թուրքիայում և Ադրբեջանում:

Երկրորդ բանախոս Մարտոյանը ցեղասպանության զոհաբանության համատեքստում ներկայացրեց ուսումնասիրվող նոր ուղղություն՝ «ականատես-վերապրողների լեզուն»: Անդրադառնալով ցեղասպանության քաղաքականության պարբերական շարունակությանն Արցախում՝ պատմաքննական զուգահեռ անցկացրեց՝ մատնանշելով ընդհանրությունները, բովանդակային եղափոխությունը և վկայագրման լեզուն:

Բանախոսությանը ներկա էին ինչպես գիտական, այնպես էլ՝ բազմագիտակարգային ոլորտների ներկայացուցիչներ (պատմաբան, էթնոհոգեբան, գրականագետ, բանաստեղծ, մանկավարժ, լրագրող, մշակույթի գործիչներ): Այն ամփոփվեց կառուցողական քննարկմամբ և շարունակական համագործակցության առաջարկներով:

Այցելության շրջանակում բանախոսները հանդիպեցին նաև հարկադիր տեղահանության հետևանքով Գյումրիում հաստատված արցախցիներին՝ բառահավաքչության նպատակով:

Գիտական նախագծի շրջանակում ռազմավարական նշանակությամբ մարզային դասախոսությունները շարունակական են:

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, բանաստեղծուհի Ռոզա Հովհաննիսյանին՝ միջգիտակարգային հարաբերություններ ձևավորելուն, «գիտական կամուրջ» կառուցելուն նպաստելու համար:

Էլինա ՄԻՐԶՈՅԱՆ,
բ.գ.թ., դոցենտ,
Թեհմինե ՄԱՐՏՈՅԱՆ,
պ.գ.թ.

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐԱ ՊԱՐՈՒԹՃԵԱՆ

ԶՐՈՅՑ ԼԵԶՈՒԻՍ ՀԵՏ

մտրակ ի ձեռին
պատկառանքի խորանին
կը սպասես որ խոնարհելու գամ
քեզի
ու շաչէ շաչէ գլխուս ուսիս
ապաշխարանքի ճիչն
հոգեպարար
ու ցաւիս մէջ փառք տամ քեզի
որ գիտես մեղաւորս բերել
դարձի

կը սլքտամ մայթերուդ
դարպասներդ ատեն-ատեն
ճռինչով մը ափերուս չափ
կը բանաս
ու հատիկներ կը լեցնես գիրերու
զորս ուտելով լեզուս օր մը
անիւի պէս պիտ՝ դառնայ
ու ես կ՝ուտեմ
ես կ՝ուտեմ
այնքան կ՝ուտեմ գիրերդ
ազատ լեզուի ի խնդիր
որ արիւնս ալ չի տոկար
թանձրութեան
ու դուրս կու գայ քիթէս-բերնէս
անմարդկային դողի մը մէջ
թաթխելով հէգ ուղեղս

ճարպակալած խորհուրդի մէջ
վսեմատեսք
երկաթեայ աքցաններուն մէջ
անոր
հիասլաց գերութեանս ճար չու-
նիմ
թուքն զայրացկոտ մատեաննե-
րուդ
ամէն տողէ շառաչելով
կը նուաճէ մանրամունր պահիկը
երբ օր մը ազատ ես ծնայ
ու սերմի պէս կաթկթելով հողիս
վրայ
կը յաւակնի փթթեցնել պտուղս

քեզմէ վեր աստուած չկայ
որո՞ւ դիմեմ միանալու
իմ բարբարոս սկիզբիս
ուր հասակս անպարագիծ
կ՝ընդլայնէր
ու ծառի պէս անվերջ կ՝իջնէր դէ-
պի վեր
կը խլրտար զմայլանքը շնորհքի
առանց երբեք հասկնալու որ
ամէնուն չի տրուիր

կը բարբառի անհաւասար
պատիժը
անհիւրընկալ մայրութեանդ
որ կը սպառնայ որբութեամբ
իր դարաւոր յաղթանակի դափ-
նիին տակ
խողխողել անջրպետը բջիջին
զառամ հրէշի թթու քրտինքով
կ՝ոռոգէ արտերն հիւանդ
ու ծանծաղ
ու կը խոթէ կուռքն իր անուան
աչքերուն մէջ լոյսի երես
երազողին

ահասարսուռ կուրութեան մէջ
իրենք զիրենք կը կապկպեն
ջիղերը
կը կծկուին մեծնալու
դաւադրութեան մէջ չինկած
վախը զիրենք կը պաշտպանէ
կեանքին դէմ
քեզի դէմ,
կը թափթփին առնէտներու
բերանին
աղերսելու անոնց գութը աղէտէն
որ պահեն
մաքառումը բախտին դէմ

***

ծերանալով կը մանկանայ
հարցումս
ժամանակով կը սկսի չհասկնալ
լեզուս, լեզու չես գտեր հետս
մանկանալով կը մահանան
լուծերս
լուծուելուս հետ
կը լուծարուիս դո՞ւն, լեզուս,
որ, աւաղ, լեզու չգտար հետս

ՎԱՀԱՆ ՁԱՆՈՅԵԱՆ

ՀՐԱՒԷՐ...

Ի՜նչ վստահութեամբ
հրաւիրեց քեզ...
«...եկէ՛ք ինծի
բոլոր յոգնածներ եւ
բեռնաւորուածներ
եւ ես ձեզ
պիտի հանգստացնեմ...»

ինծի՜ եկուր...
արձանգանգեց ականջիդ մէջ
եկո՜ւր
եկո՜ւր
հանգստացի՜ր
հասաւ քեզի
ինքնավստահ Հիւրընկալին
կանչը ուժեղ

...որովհետեւ
յոգնած էիր

բայց քանի որ
դուն այդ պահուն
հանգստութիւն
չէիր բաղձար
չընմբռնեցիր
խորհուրդը այդ հին խոստումին

ու վերջապէս
ընդունեցիր
որ թերեւս հրաւէրը
ղրկուած չէր
քու հասցէիդ
այլ միայն այն
յոգնածներուն
որոնք կ՝անցնին համեստ ու հեզ
արդէն մոռցած
նպատակը իրենց բեռան

Պատմաբաննե՜ր
կը կոչէիր
դուն գանոնք
պատմաբաննե՜ր
դուք ձեր անկման
խղճալի
մեկնաբաննե՜ր
դուք ձեր թշուառ
պարտութեան

կեանքին կէսը
ձախողելով անցուցիք
եւ միւս կէսը
բացատրելով

բացատրեցի՜ք
դուք անընդհատ բացատրեցի՜ք
ու յուսացիք
արդարացնե՜լ
ու համոզել...

մինչեւ այսօր
երբ վերջապէս
յոգնած էք...

Ու տակաւին
պիտի հարց տաս

ինչո՞ւ եկար
ու յոգնեցար
յոգնեցուցիր
բեռ կրեցիր
ու բեռ դարձար
ու տանջեցիր
տանջուեցար
բայց հիմա հոս
գլուխդ կախ
հրաժարած
կ՝ուզես հանգչիլ

երբ տակաւին
յոգնութիւնդ արդարացնող

ոչ մէկ արդար տիւ կամ գիշեր
չես վաստակած
ոչ մէկ հաւատք
չես նուաճած
չես փարատած
ոչ մէկ կասկած
չես ստեղծած
ոչ մէկ բարձունք
ոչ մէկ աստուած
Օ՜ դուք հմուտ
մեկնաբաններ
ձախողութեան
գիտէ՞ք արդեօք
եթէ երբեք
ունենայիք
մէ՜կ նուաճում

մէկ յիշարժան
իրագործում
մէ՜կ յաղթանակ
որ թողուր հետք
ու պարզ խօսքով՝
եթէ միայն
յաջողէիք
պահ մը գոնէ
տիրել կեանքին
չէի՜ք յոգներ
չէիք զգար որեւէ բեռ

եւ աւելին՝
թերեւս դուք
Հիւրընկալին հրաւէրը
չէի՜ք լսեր...

ՌԱՖՖԻ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՄԵԾ ՀՕՐՍ ԺԱՄԱՑՈՅՑԸ

Արծաթագոյն պատեանով եւ
շղթայով,
գլխալար գրպանի ժամացոյց
մ'էր,
որ միշտ, շապիկի ձախ կուրծքի
գրպանին
կը կրէր մեծ հայրս:
Ծալապատիկ կը նստէր,
մեր հասակին՝
ազնիւ,
խոնարհ,
իմաստուն:
Մենք մեր խաղերով իր կողքին,
իսկ ան խրատներով անհուն՝
կ'օծէր մեր հոգիները,
իր վերապրողի ոգին շերտելով,
մասունքներ կը նուիրէր մեզի,
ամեն այցի,
Եդեսիոյ կանչն հոգեմտաւոր՝
Աստուածաշունչ աղօթքներով
կը հաղորդէր,
հիւսք առ հիւսք,
ազգ եւ կրօն կը զօդէր
մեր աճող սրտերուն:
Աչազուրկ էր ան բայց ոչ կոյր,
ոմանք կուրօրէն կ'ըսէին
անբաղտ,
իսկ ան յուսալի եւ անվրդով՝
Աստուծոյ գովաբան,
սիրտը տեսիլներու հնոց,
Խիղճն ու գործը սուրբ,
սիրոյ անհուն աղբիւր…
Յաճախ աջ ձեռքը կ'երկարէր,
գրպանէն կը վերցնէր
ժամացոյցը,
իր արատահոս ափին առնելով՝
կը մօտեցնէր ականջին,
կեռանիւը կը լարէր
եւ կոխելով կը բանար:
Մատերով կը շօշափէր սլաքները
եւ թիւերուն գագաթին ցցուն
պրայլը,
ապա փակելով՝
կը դարձնէր կուրծքի գրպանը:
Յառաջխաղացք սլաքներով՝
կեանքը կը սլանար,
Բայց, Փառք Աստուծոյ,
որքան որ շնորհէր Մեծ Հօրս,
այնքան եւս պիտի տար,
բայց Իր կամքն պիտ ըլլար:
Մենք կը լսէինք ժամացոյցի
ձայնը,
որ համահունչ իր խրատներուն՝
կ'արձագանգէր ձախ կուրծքի
գրպանէն,
իր սրտի տրոփումն էր կարծես,
իր բարի խոհերուն եւ խօսքերուն
երաժիշտը ստոյգ:
Մեծ հայրս կը ննջէ յաւիտեան,
բայց կը լարեմ ժամացոյցը,
կը դնեմ ականջիս
եւ կը լսեմ իրեն՝
սիրտը,
միտքը,
հոգին,
բարոյական կողմնացոյց,
յարատեւելու կանչ,
պայքարելու աղաղակ,
բոլորն պատսպարուած՝
այս արծաթեայ պատեանին մէջ,
ուրկէ հաւատք, յոյս եւ սէր
պարբերաբար կը հնչեն,
երբ աղօթքիս հետ
կը լարեմ զայն:

ԽՈՐԷՆ ՔՀՆՅ ՊԷՐԹԻԶԼԵԱՆ

ՍՐՏԱԲՈՒԽ ՓԱՓԱՔՆԵՐ

Մանկապարտէզ կ'ուզեմ երթալ
Ազատ-հանգիստ լալ ու խնդալ
Ընկերներով խաղաղ խաղալ
Անտառներէն հեռու կենալ
Բողբոջ, կոկոն, ծաղիկ ըլլալ
Առանց փուշի, միշտ բուրմունք
տալ
Հին օրերուն վերադառնալ
Վերածնիլ, անմեղանալ:

Մանկապարտէզ կ'ուզեմ երթալ
Մարդկութիւնն է խեղճ
տառապեալ
Հազիւ ուրախ անակնկալ
Յետոյ տագնապ, սուգ կայ
դարձեալ
Կարելի՞ է տոկուն զգալ
Հաւատքով ալ կանգուն մնալ
Իսկ պահերուն ալեկոծեալ
Արիանալ եւ մանկանալ:

Մանկապարտէզ կ'ուզեմ երթալ
Պարզութիւնը խորքով ճանչնալ
Տիրոջ լոյսով պայծառանալ
Չարէն ընդմիշտ օտարանալ
Սիրոյ խօսնակ հանդիսանալ
Միածնէջ մսուր դառնալ
Բեթլեհէմեան աստղով շողալ
Աւետիսի երգով խայտալ:

Մանկապարտէզ կ'ուզեմ երթալ
Ներկան ապրիլ, հոգը մոռնալ
Օրօրներով խոր քնանալ
Եդեմական կեանքով ցնծալ
Անվերջ գարնան մասնիկ ըլլալ
Իսկ սրտերուն տրտմեալ, խո-
ցեալ
Ակնթարթով մը մօտենալ
Ջերմ մաղթանքով ներկայանալ:

Աշխարհն է մութ, մեղքով անկեալ
Խիղճն է լքեալ, նոյնիսկ թաղեալ
Եսը կեդրոն, շատ մեծարեալ
Մենքը ափսոս դատապարտեալ
Յիսուս ձեռքով փառաւորեալ
Կ'առաջարկէ մեզ դարձի գալ
Որ վերածէ սրտերն նեղեալ
Դրախտաբոյր ծաղկազարդեալ:

էջը կազմեց
Նունե ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող՝
Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային
մասնաճյուղ:
Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62
Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ.
հեռ. (094) 53 44 64
Խմբագրական խորհուրդ
Գլխավոր խմբագիր՝
Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլդորադո Պրինտ» ՍՊԸ
Տպագրված է «Վան Արյան» հրատարակչատան
տպարանում
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ